

Ի. Ֆ. Փ. Ա.

ՀՐ

ԱՐԵՎԱՅ ԱՍՏՈՒԹՅՈՐ ԿԵՐՈՒՆ

Յ. Մ. Ք. ՅԱՊԵՏՅԱՆ ԽԱՐԱՀԱՅԻ



ԳՐԵԴԱՑ  
ՄԻԹՈՒՐԵԱՆ ՏՎԱՐ  
1921

232.9

Q - 52

8 մա 19 դիմուց  
34

2006  
1928  
88

018

Նույն հանգստական  
Մեսաքքանի Հայի Արքայության  
Ծեմադրամներ - Լիբանան

ԱՐԻՍ

ՄԵՐԵՐԱՅ ԸՆՈՒՅՆԻՑՈՐ ԿԱԽՈՒՆ



232.9  
12-52

Ա. Մ. Փ. Ա.

ԱՐԻ

ԱՐԵՄԱՅ ԱՍՏՈՒԱԺԱՄՈՐ ԿՈՒՍԻՆ

Յ. Ա. Ք. ԹԱՍՈՒՄԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՅ



ՎԻԵՆԱ  
ԽՈՏԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ  
1921

Nihil obstat.

P. Claudius Chanteur S. J.  
sup. miss. arm.

Berythi, die 13 Novembris 1920.

No. 10706.

Imprimatur

Ex Curia Archieppali Viennen. in Austria  
die 23 Decembris 1920.

Dr. Josef Pfluger  
Generalvikar.

Dr. Kamprath  
Cancell.



1419 - 42



2169-2010

Հյա զքրուկին մէջ պիտի նշմարով մար-  
դոց յուսաթից դիմումս առ Աստուածածին եւ  
Աստուածածօր չորհամի բարութիւնն առ  
մարդիկ: Հսու մնձ ու փոքր՝ որդիսկան խան-  
պալատանօր կը խօսին, կ'աղօթեն Աստու-  
ածածօր Կուսին եւ Աստուածածին մայրական  
չորհամաւ գրադպանօր կը միմիթարէ, կը  
յորդորէ մարդիկ: Պարզութիւն զգացմանց  
մէջ, Յանեւաբար պարզութիւն եւս զանոնք  
արտայայտիու եղանակին մէջ: Թող այս Աս-  
տուածային չորհաց ցողն իջնէ մեղմի, նո-  
ռոգէ մարդոց սիրոց, թեզմատորէ այդ ցա-  
նաւոր անդաստանօր եւ ամեն նույն պարզեւ,  
չորհաց լիութի կեսնքը, չորհաց երանեւի  
վիճակը:

Կ, Պուլիս, 1 Մայիս 1916:

Ա Մ Ի Ս  
ՄԱՐԵՄԱՅ ԱՍՏՈՒԲԺԵՄՈՐ ԿՈՒՍԻՆ

Ե. Օ Պ

*Մարիամ Մայր՝ իմ ապաստան է:*

**Սուրբ եկեղեցւոյ առ Ամենասուրբ կոյսն  
Մարիամ յատկացուցած այս անուշիկ  
կոշումը, “Ապաստան, անունն՝ աշայց  
առջեւ գանուելուն երջանիկ եմ”:**

**Ապաստան. Հոն է, որ վախ դող ունե-  
ցողները կու գան կը պատսպարուին  
ապաւեն մը գտնելու համար։ Հոն է, որ  
յանցաւորները կու գան կը պահուին  
պաշտպանութիւն գտնելու համար։ Հոն  
է, որ աշխարհիս մէջ աղքատ եղողները  
կու գան կ'ապրին բնակարան մը գտնելու  
համար։**

**Ո՛վ Մարիամ Տիրամայր, կը վախնամ։  
Յանցաւոր եմ, աղքատ եմ եւ քեզ կու**

գամ: Կը վախնամ իմ տկարութենէս եւ  
իմ անհաստատամութենէս: Եթէ եր-  
բէք մարէս հանէի քանիցս անդամ Աս-  
տուծոյ տուած խոսութենքս: Կը վախ-  
նամ սատանայէն, որ զիս պիտի փորձէ եւ  
մեղաց առիթներ պիտի ներկայացնէ ինձ:  
Անոնք այնչափ աւելի հրապուրիչ պիտի  
ըլլան, որչափ ես կ'ուզեմ մաալ աւելի  
բարեպաշտ: Կը վախնամ Ամենաբարին  
Աստուծմ, որ, կարելի է, պիտի ձանձրա-  
նայ նոր նոր յանցանքներս ինձ ներելէն,  
եւ քիչ ատենէն զիս պիտի կանչէ իր  
ատեանը:

Աղքատ եմ. ես իմ անձիս վըայ կը-  
դամթէ ինձ կը պակսի համեերութիւն,  
ջերմեռանդութիւն, պարտուց կատար-  
ման սէր: Այսու հանդերձ առանց այս  
առաքինութեանց չեմ կրնար երկինք  
երթալ:

Ո՛վ Մարիամ Տիրամայր, լաւ կը տես-  
նես պատճառները, որոնց համար երջան-  
կութեամբ ընդունելու եմ եկեղեցոյ  
քեզ տուած այս Ապաստան, կօչումը  
եւ կենացս ամեն օրը քու խորանիդ առ-  
ջեւը գալ եւ քու քովդ կենալու եմ  
քանի մը վայրիեան: Հո՞ս սատանան ալ-

եւս զօրութիւն չունի: Հո՞ս Աստուած չի  
պատժեր յանցաւոր հոգին, որովհետեւ  
քու հովանաւորութեանդ տակ աղեկի կը  
գառնայ այն հոգին: Հո՞ս քու սրտէդ  
բգիսող ու փայլող առաքինութիւնները  
կամաց կամաց կը թափանցեն հոգւոյն  
մէջ:

Մարիամ Մայր, քեզ կը խոստանամ  
գալ եւ քու բարեխօսութիւնդ հոյցել  
միշտ եւ հանապաղ:

### Յ. Օ Պ

Մարիամ Մայր զիս գաստիարակու ձայնն է:

Ահաւասիկ գարձեալ ես, ով Տիրա-  
մայր իմ: Հոգիս աւելի խաղաղ, հան-  
գարտ: Աիրատ աւելի ուրախ, զուարթ:

Կու գամ քու ձայնդ լսելու: Քաղցրիկ  
ձայն: Մօր մը ձայնէն աւելի քաղցրիկ  
ինչ ձայն կրնայ ըլլալ: Մօր մը սրտէն եւ  
շրթունքներէն անցած ամենազժուարին  
խրատներն անգամ, ոչ, որչափ քաղցրու-  
թիւն կը ստանան եւ բարութիւն:

Մայր մը երկար ատեն մտիկ ընելու  
եւ իր զաւակաց անխօրհրդութիւններէն  
չձանձրանալու, նոյն իսկ անոնց չար կամ

Քէն շատկանալու համբերութիւնն  
ունի: Մայր մը իր սորվեցնել ուզած  
խրատները, հրահանգները քաղցրու-  
թեամբ մը իմացնելու եւ հազար ու մէկ  
տեսակ մեղմ ձեւերով ներկայացնելու  
վարպետութիւնն ունի: Մայր մը առանց  
երբեք համբերութիւնը կորսնցնելու,  
նորէն նորէն սկսելու եւ շարանակելու  
յարատեւութիւնն ունի:

Ես այս յատկութիւնները կը տեսնեմ  
քու սրտիդ մէջ, ով Տիրամայր իմ Մա-  
րիամ, Աստուածային հրահանգիչս եւ  
դաստիարակս: Ո՞չ, խօսէ ինձ: Երէկ քեզ  
խոստացայ ամէն օր կանոնաւորապէս քու  
քովդ գտալու: Այսօր՝ հլու եւ հնազանդ-  
ըլլալու խօսք կու տամ քեզ:

Խօսէ ինձ Ցիսուսի նկատմամբ: Խօսէ  
ինձ անոր անձնուրացութեան, անոր սի-  
րոյն, անոր հնազանդութեան նկատմամբ:  
Խօսէ ինձ այն քու այնշափ պարզ, հրա-  
պուրիչ, սրտագրաւ, կատարելը դիւրին  
երեւցած առաքինութեանցդ մասին:  
Խօսէ ինձ նաեւ քու սիրոյդ եւ գթու-  
թեանդ մասին:

Ո՞վ Տիրամայր իմ Ամենասուրբ Կյո-  
Մարիամ, զիս շատ հլու եւ հնազանդ ըրէ:

**Գ. Օ Թ**  
Մարիամ Մայր զիս սիրող Սիրոտն է:  
Աստուածամայրս Մարիամ զիս կը սի-  
րէ: Ո՞չ, ինչ քաղցրիկ, ինչ բարի եւ  
միսիթարական խօսք:

Սուրբ Գրանչչսկոս Սալեզացին օր մը  
կ'աղաղակէր եւ կ'ըսէր: Ո՛չափ երջանիկ  
եմ. թէ երկրաւոր մայրս եւ թէ երկնա-  
ւոր Աստուածամայրս երկուքն ալ կը սի-  
րեն զիս: Նոյնն է ինձ համար եւս:

Կարելի է, աւաղ, երկրաւոր մայրս ալ  
եւս քովս, աշխարհիս վրայ չէ: Բայց  
դեռ ունիմ եւ միշտ պիտի ունենամ  
Ամենասուրբ Կյոսն Մարիամ Աստուածա-  
մայրս:

Մարիամ Մայր կը սիրէ զիս, եւ ինձ  
նկատմամբ ունեցած սէրը, Աստուծոյ  
վրայ, իմ հոգւոյս վրայ եւ ինք իր վրայ  
դարձուցած երրեակ ակնարկով է, որ  
ստեղծուած, գրուած, պահպանուած է  
իր սրտին մէջ:

Ա. Երբ Մարիամ Տիրամայրս զԱստու-  
ած դիտէ, կը տեսնէ մեզ նկատմամբ Աս-  
տուծոյ ունեցած անհուն սէրը. կը տեսնէ  
միանդամայն թէ զմեզ սիրել ուզելուն  
համար է, որ զմեզ ստեղծած է Աստուած:

Մեղ կեանը տուող, կեանքերնիս պահող ու պահպահող, կեանքերնիս աղնուացնող Աստուծոյ Հայրական սրտին մէջ կը տեսնէ զմեղ ամէնքս։ Մօր մը գթութեամբը մեզմէ չզատուող, մեր կարսղութեան համեմատ միայն զմեղ փորձութեան ընթարկող, մեր կամաց աղաստութիւնը յարգող, մեր կենաց եւ ոչ մէկ վայրկեանին իր աշքը մեզմէ չդարձնող Աստուծոյ Հայրական սրտին մէջ կը տեսնէ զմեղ ամէնքս։ Կը տեսնէ որ այս երկնաւոր Հայրը իր անյագ սէրէն մղեալ ու ստիպեալ զմեղ գժուխքէն քաշել հանելու նպատակաւ երկրիս վրայ զրկեց իր Միաձին Որդին եւ միշտ մեզ նկատմամբ ունեցած սիրոյն համար ամենէն դառնակսից մահուան մատնեց իր այս Սիրելի Որդին Յիսուս Քրիստոսն։

Նմանապէս երբ Մարիամ Տիրամոյրը իր ակնարկը գարճնէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի վրայ, զայն կը դանէ չարշարանաց, խոնարհութեանց, տառապանաց մէջ։ Ներկայ եւ վկայ է անոր ձաղկմանը։ Ներկայ եւ վկայ է անոր փուշ պատկմանը։ Ներկայ եւ վկայ է անոր խաչելութեանը։ Այս աղերսալի եւ

յանհունս սրտաշարժ Յիսուսի ըրած աղօթքը ականջէն չ'երթար. Աստուծ իմ, մարդոցմէ եւ ոչ մէկը յաւիտեան թող կորուփի։

Ո՞չ, Աստուծամօր զմեղ չսիրելը ինչպէս պիտի կարենացինք ուզել կամ երեւակայել։ Եսոյն իսկ եթէ իրեն համար ոչինչ մ'ըլլայինք, եթէ մենք ինքնին անոր յարգանքը գրաւող, անոր գթութիւնը շարժող բան մը չունենացինք մեր վրայ, Մարիամ Մայր գարձեալ զմեղ պիտի սիրեր միայն Աստուծոյ սիրոյն համար։ Որովհետեւ լաւ գիտէ թէ զմեղ սիրելով Աստուծոյ հաճելի եղած Կ'ըլլայ, զԱստուծ միսիթարած կ'ըլլայ։

Այս, բարի եւ միսիթարական խօսք։ Մարիամ Մայր զիս կը սիրէ. եւ ես, Տիրամայր իմ Մարիամ, ես ալ կը սիրեմ զքեզ։

### Փ. Օ Պ

Մարիամ Մայր զիս սիրող Սիրտն է։

Ամենասուրբ Կոյսն Մարիամ զմեղ կը սիրէ, որովհետեւ զմեղ կը տեսնէ յԱստուծ եւ ՚ի Յիսուս Քրիստոս։ Ասկէ զատ զմեղ կը սիրէ, որովհետեւ զԱստուծ

կը տեսնէ մեր մէջ. կամ որովհէտեւ մեր  
հոգին պատկերն է Աստուծոյ:

Բ. Եթէ Մարիամ Մայր նկատէ մեր  
հոգին, մեր խեղճ հոգին, որ անտարակոյս  
յաւիտեան կը կորսուի, եթէ ինքն անոր  
օգնութեան չհասնի. Մարեմայ դութը  
կը շարժի մեր վրայ:

Մեր հոգին Պատկերն է Աստուծոյ,  
որու որբութիւնը ծանօթ է Մարիամ  
Մօր: Արդ՝ Ամենասուրբ Կոյսն Մարիամ  
կարենալով արդելել որ չըլայ թէ այս  
պատկերը արատաւորի, պիտի թոյլ տա՞ր  
որ Աստուծոյ այս պատկերն ըլլայ սատա-  
նայի խաղաղիքն, խաղք ու խայտառակիր:  
Ո՛չ, ո՛չ, Աստուծոյ նկատմամբ Մարիամ  
Մօր ունեցած սէրը կը հակառակի ատոր,  
չե կրնար հանդուրժել ատոր:

Մեր հոգին գնուած է իր Որդւոյն,  
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի արեամ  
բը: Մեր հոգին պատճառ եղաւ շատ մը  
խոնարհութեանց, ցաւոց, արտասուաց,  
որոնց յիշատակը Մարիամ Մօր աշաց  
առջեւն է միշտ: Արդ արդելել կրնալով  
հանդերձ՝ Մարիամ Աստուծամայր թոյլ  
պիտի տա՞ր որ այնչափ ցաւերով, զոհո-  
րութիւններով գնուած այս հոգին եր-

թայ կորսուի յաւիտեանս յաւիտենից:  
Ո՛չ, ո՛չ, Աստուծոյ նկատմամբ իր ունե-  
ցած սէրը, մարդոց նկատմամբ ունեցած  
իր սէրը կը հակառակի ատոր. չի հան-  
դուրժեր ատոր:

Վերջապէս մեր հոգին սահմանուած է  
ճանչնալու, սիրելու զԱստուծուած: Մեր  
հոգին սահմանուած է նաև հրեշտակաց  
հետ միանալով յաւիտեանս յաւիտենից  
զԱստուծուած փառաւորելու, Աստուծոյ  
մեծ վայելութիւնը եւ սէրը գովելու բար-  
ձրացնելու: Արդ՝ կարենալով հանդերձ  
Ամենասուրբ Կոյսն Մարիամ թոյլ պիտի  
տա՞ր, որ այս հոգին անիծէ զԱստուծուած  
յաւիտեանս յաւիտենից, հայհոյէ Աս-  
տուծոյ գէմ: Ո՛չ, ո՛չ, Աստուծոյ նկատ-  
մամբ իր ունեցած սէրը, բնկերին նկատ-  
մամբ իր ունեցած սէրը կը հակառակի  
ատոր, չե կրնար հանդուրժել ատոր:

Նրէկուան պէս եղբակացնենք դար-  
ձեալ. Մարիամ Մայր կը սիրէ զմեզ եւ  
ըսենք իրեն գորովանօք. Մենք եւս Մա-  
րիամ Տիրամայր, մենք եւս կը սիրենք  
զքեզ. Դուն մեզ շնորհէ քո Միածին  
Որդիկ Յիսուսը, մեր սէրը:

## Ե. Օ Բ

Մարիամ Մայր զիս սիրող Սիրոսն է:

Ամենասուրբ Կոյսն Մարիամ զմեղ կը  
սիրե, ոչ միայն որովհետեւ զմեղ կը տես-  
նէ յԱստուած եւ մեր Հոգին Աստուծոյ  
պատկերն է, այլ որովհետեւ ինքն մեղ  
համար եւ մեր պատճառաւ լի շնորհօք  
է, Աստուծամայր է եւ մանաւանդ մեր  
ալ Մայրն եղաւ:

Գ. Եթէ Մարիամ Մայր նկատէ ինք  
իր անձը, ինք զինքը կը գտնէ՝ “Ի շնոր-  
հօք, եւ այս շնորհքները զինքը երախ-  
տագիտութեան կը շարժեն, կը մղեն  
միշտ եւ հանապազ: Իր բնել կրցած բա-  
րիքները Աստուծոյ սիրոյն համար ընելու  
ստիպեալ կը զգայ ինք զինքը:


Անտարակոյս Աստուծոյ շնորհակալ  
կը լսայ: Իր խօսքերով, իր սրտին զգա-  
ցումներով Կօրհնէ, կը բարեբանէ, կը  
փառաւորէ զԱստուած: Բայց թէ Աս-  
տուծոյ ատեղծած Հոգիները անմեղ եւ  
իրենց արարչին հաւատարիմ պահելով  
եւ թէ զԱստուած թողելով հեռացող  
Հոգիները վերստին անոր գարձնելով եւ  
անոր սիրոյն մէջ հաստատելով, Աստուծոյ  
որչափ մեծ ուրախութիւն եւ զուարձու-

թիւն հայթայթելս լաւ զիտէ: Արեմն  
ասոր համար կարծես թէ երախտագիտա-  
կան ոգւով մը զմեղ սիրելու ստիպեալ  
կը գանէ ինք զինքը:

Մարիամ Աստուածամայր զիտէ թէ  
սահմանուած է նաև մարդոց Մայր: Լաւ  
կը ճանչնայ Աստուածապին նախախնամու-  
թեան կողմանէ իր վրայ գրուած բեռն:  
Լաւ կը ճանչնայ նաև իր վերջին զօհը  
կատարելու վրայ եղած ատենուան, խա-  
չին վրայէն իր սիրելի Արդւցին Յիսուսի  
կողմանէ իրեն յայտնուած Մայրութեան  
պարաքը: Մօր մը վրայ ինկած պարտա-  
կանութիւններն իր ամէն կողմրովը կը  
յիշէ: Աստուծոյ՝ զինքն Աստուածա-  
մայրութեան պատուոյն բարձրացուցած  
ատենուան ունեցած ամէն զիտուարու-  
թիւնը Ամենասուրբ Կոյսն Մարիամ ոչ  
միայն գուշակած, այլ անոր խորը թա-  
փանցած է: Հոգին աւանդելու վրայ  
եղած ատենուան՝ մեր Յիսուս փրկչէ.  
“Ահա Որդիք քո՞յ Խօսքերուն հետեւան-  
քին ինչ ըլլալին ալ զիտէ լիովին:

Արդ՝ Մարիամ Տիրամայր, որ իր պար-  
տականութեան հաւատարիմ մաս կո-  
ղէ, Մարիամ Տիրամայր, որ լաւ կը տես-

2169-2010



նէ, թէ իր այս պարտականութիւնը միայն  
սոս սիրել բառին մէջ կը հայանայ եւ  
կը համառօտուի, Մարիամ Տիրամայր  
կ'ըսեմ, որպիսի սիրով եւ հաճութեամբ  
պիտի թշոյլատրէ, որ իր սիրոն այս սիրոյ  
զգացման անձնատուր ըլլայ:

Քաջալերուէ ուրեմն, ով անձն իմ,  
մսիթարուէ, երջանիկ եղիր: Սիրոդ նե-  
զուած ու սեղմուած ատեն, աշու դողը  
զքեղ չըջապատած ժամանակ կրկնէ.  
Մարիամ Մայր զիս կը սիրէ. եւ իրեն ըսէ  
խորին չնորհակալութեան զգացումով մը.  
Ես ալ, ով Տիրամայր իմ Մարիամ, ես  
ալ կը սիրեմ զքեղ:

## Զ. Օ Ր

Մարիամ Մայր միշտ պիտի սիրէ զիս:

Սա՝ Մարիամ Մայր միշտ պիտի սիրէ  
զիս խոսքը ճշմարիտ է: Այո, միշտ. նոյն  
իսկ եթէ ըլլամ յանցաւոր:

Ա. Մարիամ Մայր միշտ պիտի սիրէ  
զիս, որովհետեւ միշտ պիտի պահէ իր  
մայրական սիրաը: Արդ մայր մը՝ որչափ  
ժամանակ որ իր որդին ողջ եւ կենդանի  
ըլլայ, անոր դարձին սպասելէն ոչ կը

ձանձրանայ եւ ոչ կը յոդնի: Կ'ապրի,  
Կ'ըսէ ինքնիրեն, ուրեմն կրնայ դարձի  
գալ: Եւ անառակ որդւոյն հօր նման իր  
սրտին դուռը բաց կը թողու: Ասկէ զատ  
մեղքն ի՞նչ վիճակի մէջ դրած ալ ըլլայ  
այդ խեղճ մեղաւոր հոգին, Մայրն ատոր  
համար կը գտնէ միշտ սիրոյ խօսք մը:  
Որդին որ ժամու ալ որ դառնալու ըլլայ,  
մայրը Կ'ընդունի զայն սիրով:

Մայր մը իր յանցաւոր որդւոյն քով  
կեցած ամէն հնարքներ ի գործ կը գնէ,  
ամէն քարի զլուխ կը զարնէ զայն դարձի  
բերելու համար: Ար յորդորէ, կը յանդի-  
մանէ, կը պատուհասէ, կը պատժէ:

ԱՇ, Տիրամայր իմ Մարիամ, եթէ  
երբէք մեղքի մէջ իյնալով քեզմէ հե-  
ռուն փախչիմ, ազօթքը մէկդի թողում,  
քու յիշատակդ անդամ ինձմէ հեռաց-  
նեմ, բռնի եւ ստիպմամբ զիս դարձուր  
առ քեղ եւ առ Աստուած: Ի՞նչ կ'ընես  
ըրէ, տուր որ քեզմէ հեռացածիս պէս  
ինչ որ ալ ընեմ զզուանք զգամ. ուր որ  
ալ գիմեմ ձեռքս պարապ ելլեմ, իմ  
մասն ու բաժինս ըլլայ ձարձրութիւն եւ  
տաղտկութիւն: Մարդիկ եւս թող լքա-  
նեն զիս, որպէս զի միայն 'ի քեղ եւ քու

քովդ գտնեմ իմ ապաւէնս, իմ ապաստնոս:

Մայր մը իր որդին իրեն գարձնել բերել կրցողներուն քով աշխատելէ յոզնել չպիտեր: Յանցաւոր կամ մեղաւոր հոգի մը դարձի բերել կրցող միայն Աստուած Կայ: Արդ՝ Ամենասուրբ Կոյսն Մարիամ անոր կ'աղաւէ, կը պաղատի որ չառնէ մեր հոգին, չմեռցնէ զմեզ: ընդհակակը պարզեւէ մեզ զզջման շնորհքը:

Ո՛՛ Խեղճ մեղաւոր հոգի, երբ մեղքերդ, յանցանքներդ, պակասութիւններդ լերան նման բարձրացած քեզ գեմ կը դրգեր Աստուծոյ բարկաթիւնն, անդին Ամենասուրբ Կոյսն Մարիամ կ'աղաւէր, կը պաղատէր քեզ համար եւ քիչ մ'եւս միջոց կը խոդրէր Աստուծմէ եւ այս միջոցը շնորհեց քեզ Աստուած: Երբ գուն գլուխդ առած կ'երթայիր մեղք կը գործէիր, գոնէ մեղքի առիթներէն չէիր փախչիր, Ամենասուրբ Կոյսն Մարիամ, ցաւադին Տիրամայրը կը վազէր, Յիսուսի իշխին քով կ'երթար եւ իր որդւոյն կ'ըսէր: Ներէ անոր, որովհետեւ բրածը չի գիտեր:

Արդ՝ նոյն իսկ մոքէս կրնամ անցնելոր չըլայ թէ Մարիամ Աստուածին զիս մերժէ, զիս իրմէ հեռուն վրադէ, զիս չսիրէ, մանաւանդ երբ զջացեալ սրտով երթամ իյնամ անոր ոտքը:

Ա՛Հ, ո՛Հ, Մայր իմ Ամենասուրբ Կոյս Մարիամ, քեզ կը խոստանամ հաստատապէս, որ երբէք յոյս չպիտի կարեց քու գթութենէդ:

### Է. Օ Պ

Մարիամ Մայր միշտ պիտի սիրէ զիս:

Մարիամ Մայր միշտ պիտի սիրէ զիս նոյն իսկ եթէ յանցաւոր ըլլամ, կը բաւէ որ յամառնթեամբ չյարատեւնմ՝ ի չարն:

Բ. Այն, Տիրամայրս Մարիամ միշտ պիտի սիրէ զիս, որովհետեւ ինչպէս որ եկեղեցւոյ անոր առած անունները կը ցուցնեն Ամենասուրբ Կոյսն Մարիամ միշտ եւ հանապազ նոյնը պիտի ըլլայ իրապէս եւ ճշմարտապէս, այսինքն ապաստն մեղաւորաց եւ Մայր գթութեան ու ողորմութեան:

Արդ՝ ինչո՞ւ այս անունները պիտի  
արուեին իրեն, եթէ աշխարհիս վրայ ոչ  
թշուառ գանուէր եւ ոչ ալ մեղաւոր:

Յանցաւոր ես եւ ասո՞լ համար կը վախ-  
նաս, որ չըլլայ թէ քեզմէ երես գարձնեն:  
Ո՞չ, Մարիամ Աստուածածինը չճան-  
չնալուգ նշան ու ապացոյց մ'է ատիկա:  
Մարիամ Աստուածածինը Յիսուսի Մայրն  
է: Բայց ոչ թէ արդարներոն, հապա  
մեղաւորներուն համար աշխարհ եկող  
Յիսուսի Մայրն է: Ամենասուրբ Կոյսն  
Մարիամ մեր մեղաց քաւութեանը, մեր  
հոգւոց փրկութեանը համար թափուած  
Աստուածային արիւնը հայթայթող ան-  
նման Մայրերին է: Յրբոյն Բերնարդոսի  
ըստածին պէս Աստուածածին այս Աստուած-  
ային արեանը բաշխիչ սահմանուած ու  
կարգուած է: Արդ՝ եթէ այդ փրկարար  
արիւնը մեղաւորաց ու յանցաւորաց վրայ  
չժափէ, որու վրայ պիտի թափէ:

Յանցաւոր ես եւ ասո՞լ համար կը վախ-  
նաս, որ չըլլայ թէ քեզմէ երես գարձնեն:  
Ո՞չ, Մարիամ Աստուածածինը չճան-  
չնալուգ նշան ու ապացոյց մ'է ատիկա:  
Ամենասուրբ Կոյս Մարիամ՝ մեղաւորաց  
եւ միայն մեղաւորաց օդտին համար եղաւ

Մայր Աստուածոյ: Ասիկա այսպէս ըլլալէն  
յետոյ, Յրբոյն Անսելմոսի խօսքին համե-  
մատ, այլ եւս ինչպէս կրնամ ունենալ  
ահ ու դոլ: Միթէ՝ իրաւունք չունիմ  
դառնալ իրեն բաելու. Գթա իմ վրաս,  
դուն որ քու մեծութիւնդ կը պարտիս ինձ:

Յանցաւոր ես եւ ասո՞լ համար կը վախ-  
նաս, որ չըլլայ թէ քեզմէ երես գարձ-  
նեն: Արդ ե՞զ կամապաշտութեամբ եւ  
անդարմաննելի կերպով մը որոշած ես  
միշտ մեղքի մէջ ապրիլ: Այդ պարա-  
գային հնար չկայ: Անտարակոյս ես չեմ  
կրնար քեզ ներշնչել վատահութիւն  
յԱմենասուրբ Կոյսն Մարիամ, որ ոչ թէ  
մեղքին, հապա մեղաւորաց իստուաբանն  
է: Բայց այդ չէ քու վիճակ: Դուն չես  
ուզեր միշտ մեղաւոր մնալ, քա ի որ Աս-  
տուածամօր քով կու գաս:

Եկուր ուրեմն, ինչպէս կը հաստատէ  
Սուրբն Բեռնարդոս: Աստուածածին պա-  
տրաստ է քեզ օգնելու: Ինքը խեղճ մե-  
ղաւորաց սանդուղն, վերահանն ըլլալով  
զանոնք մեղմի եւ առանց յողնութեան  
վեր կը հանէ, կը տանի Աստուածոյ քով:  
Եկուր ուրեմն, Աստուածամօր քով  
եկուր, առանց վախնալու եկուր: Ու

սրտին մէջ, ոչ գէմիին վրայ պիտի նշմարես կամ գտնես այնպիսի բան մը, որ նոյն իսկ հեռուէն հեռու քիշ շատ նմանի խստութեան կամ սոսկումի: Քաղցրներուն քաղցրն է: Հեղերուն հեղն է: Ամենուն կու տայ կաթը, որ կը սնուցանէ, կը զօրացնէ, բուրթը որ կը պատապարէ ցուրտէն: Աւետարանը ծայրէ ծայր թղթատէ եւ տես նայիմ կրնաս անոր մէջ գտնել դաղափար մը, որ ցուցնէ թէ Աստուածածին ունեցած ըլլայ խստութիւն, անգոթութիւն կամ անհամբերութիւն: Ոչ երբէք: Ընդ հակառակը, մեր Տիրամայրն Մարիամ ամենուն կը բանայ իր ողորմութեան թեւերն ու զիրկը. որպէս զի ամէնն ալ վայելն իր շնորհքները: Գերիները կ'ընդունին ազատութիւն, հեւանդները՝ առողջութիւն, տրտմեալները՝ միմիթարութիւն, մեղաւորները՝ ներում, արդարները՝ շնորհք եւ հրեշտակներն ու ընտրեալներն ուրախութիւն:

Դիմենք, երթանք ուրեմն անոր քով, իյնանք անոր սաքը: Զբաժնուինք իրմէ, թող շտանք զինքը մինչեւ որ պարգեւէ մեղ իր օրհնութիւնը:

## Է. Օ Պ

Մարիամ Մայր զիս պաշտպանող փաստաբանն է:

Իրեն իր յանցաւոր ձանչցած ու գիտցած ամբանտանեալը պաշտպանելու համար պէտք է քաջարտութիւն, պէտք է սէր, պէտք է ազդեցութիւն ունենալ:

Քաջարտութիւն պէտք է դատաւորին առջեւ խօսելու համար, մանաւանդ եթէ վշտացեալն է նոյն ինքն դատաւորը:

Քաջարտութիւն պէտք է յանցաւորը դատապարտել տալու համար՝ մեծամեծ շահեր եւ անոր գէմ իրաւացի գանդատներ ու զօրաւոր փաստեր ունեցող ամսատանողներուն առջեւ խօսելու համար:

Զինքը պաշտպանողին նուիրելու մեծքան մը չունեցող, հապա միայն երախտագիտութիւն ունեցող, իսկ երախտագիտութենէն զատ բան մը չունեցող խեղճ յանցաւորին նկատմամբ պէտք է ունենալ սէր:

Աջիալ կտրելու պաշտօնն ու պարտքն ունեցող դատաւորին սիրտը մեղմացնելու եւ յանցաւորին ներում շնորհել տալու համար այդ դատաւորին վրայ պէտք է ունենալ ազդեցութիւն:

Ո՞վ Տիրամայր իմ Մարիամ, զոր  
ոռւրբերը կը կանչեն պաշտպանն ու փառ-  
տաբանն յուսահատելոց, երբ կը տես-  
նեմ որ խաչին քովը կեցած ես. եւ քու  
աչքերդ Աստուածային Որդույդ իմ  
վշտացուցած դատաւորիս վրայ գարձու-  
ցած ես, երբ կը լսեմ որ ներում բառը  
կ'արտասանես. կարծեմ թէ վրաս կու գայ  
նոր հոգի մը, նոր կեանկը մը: Աստահ ես,  
որ քու Աստուածային Որդիդ զքեզ չե  
մերժեր. քեզմէ երեսչե դարձներ. ինչեր կը  
պարտի քեզ: Ո՞շափ կը սիրէ զքեզ: Ի՞նչ-  
պէս պիտի կարենար արտմեցնել զքեզ:

Ո՞վ Տիրամայր իմ Մարիամ, լաւ զի-  
տեմ թէ չես կոնար զիս անմեղադիր կա-  
ցուցանել, արդարացնել: Բայց կրնա  
ներում ինդրել, կրնա մանաւանդ խոռ-  
տանալ, որ ասկէ վերջը պիտի ըլլամ  
աւելի հաւատարիմ, աւելի հնագանդ,  
աւելի ուշագիր: Այօ, Աստուծոյ խոստա-  
ցիր, որ պիտի հօկեմ իմ աչքերուս եւ  
սրտիս վրայ: Խոստացիր, որ պիտի թո-  
ղում զիս մեղքի տանող առիթներն եւ  
պիտի փախչիմ անոնցմէ: Խոստացիր, որ  
եկեղեցւոյ դրած բոլոր պատուերները  
պիտի կատարեմ քաջարտութեամբ:

Ո՞չ, այս անկեղծ խոստումներս որ-  
շափ կը միմիթարեն պիրտս: Աստուածա-  
մօրս Մարիամու ինձ հանդէպ տածած  
սերը որպիսի յոյսերով կը լեցնէ պիրտս,  
կը զօրացնէ անձս:

## Թ. Օ Պ

Մարիամ Մայր իմ նեցուկս է. Հոն է իմ  
ամբողջ էութիւնս:

Անկում մ'ընելու, իյնալու վրայ եղող  
բան մը բոնող, կասեցնողին կ'ըսեն նիւ-  
թական նեցուկ:

Անկում մ'ընելու դժբախտութիւնն  
ունեցողն ինկած տեղէն ենելու օգնո-  
ղին կ'ըսեն նեցուկ:

Նոր նոր անկումներու առջեւն առնո-  
ղին, վստահսութեամբ քալելու օգնողին  
կ'ըսեն նեցուկ:

Գեռ մատաղ մանուկ եղած ատենս  
երկրաւոր Մայրս ինձ համար այս ամէն  
բաները կ'ընէր: Դողդղալով քալած ժա-  
մանակս ամէն մէկ քայլափոխիս ձեռքէս  
կը բանէր: Եթէ իյնայի, զարմանալի արա-  
գութեամբ մը զիս վեր կը վերցնէր: Ամէն  
մէկ առած քայլս կ'առաջնորդէր ինձ:

Եւ գուն, Տիրամայր իմ Մարիամ,  
նոյն բաները չեն, որ քանիցս անդամ  
ըրեր եւ հոգւոյս համար: Ինձ ներկայա-  
ցող մեղաց առիթներէն եթէ զիս մեկ-  
դի շառնէիր եւ զիս չհեռացնէիր անօնց-  
մէ, մինչեւ հիմայ որշափ մեղքեր գոր-  
ծած պիտի ըլլայի: Եթէ գուն քու  
ներշնչումներովէ զիս ապաշխարութեան  
տառանը, խոստովանարան տարած չըլ-  
լայիր, որշափ երկար ժամանակ պիտի  
ապրէի մեղաց վիճակին մէջ: Եւ երր գոր-  
ծած մեղքերս կը տեսնեմ, գողալու չեմ,  
որ կամաւ թողած եմ իմ տկարութեանս  
ընծայած նեցուկդ: Առաւօտեան աղօթքն՝  
ահա օրուան համար նեցուկ մը: Երե-  
կոյեան աղօթքն՝ ահա գիշերային ժա-  
մերուն համար նեցուկ մը: Այցելութիւն  
Ամենասուրբ Հարոքութեան՝ ահա սա-  
րանայի փորձութեանց գէմ նեցուկ մը:  
Վարդարանը՝ ահա մեղաց առիթներուն  
գէմ նեցուկ մը:

Ո՞վ Ամենասուրբ կոյս Մարիամ, առա-  
ջուան անեցած քրիստոնէական վարքս  
ու կեանքս, ջերմուանդական գործերս  
կ'ուղեմ վերստին ձեռք տանել: Ինձ  
օգնէ, որ ըլլամ հաւատարիմ:

## Ժ. Օ Պ

Մարիամ Մայր կընայ զիս արդայութիւն  
տանիլ:

Քանի մ'օր կուղեմ խիստ միթթարա-  
կան մատածումներով զբաղիլ եւ սիրս  
սփափել:

Մարիամ Մայր կրնայ զիս արքայու-  
թիւն տանիլ, որովհետեւ

Ա. Ամենասուրբ կոյսն Մարիամ Առ-  
տուծոյ ամենէն աւելի հաւատարիմ,  
արարածն եղաս: Եւ ինքն առան-  
ձինն զԱստուած աւելի սիրեց քան  
ամէն սուրբերն ի միասին: Ինքն առան-  
ձինն սիրոց պատուիրանը կատարելապէս  
եւ լիովին կատարեց. սիրեց զԱստուած  
բոլոր սիրովն ու սրտովը, բոլոր անձօվը,  
բոլոր զօրութեամբը: Սիրեց զԱստուած  
որշափ որ արարած մը կընայ սիրել:

Ասոր փօխարէն Աստուած ալ զինքը  
սիրեց իր Աստուածային սիրոյ բոլոր կա-  
րողութեամբը, որովհետեւ Աստուած  
առատաձեռնութեան եւ բարերարու-  
թեան մասին եւ ոչ մէկէն կ'ուղէ վար  
մնալ: Արդ՝ եթէ Աստուած Ամենասուրբ  
կոյս Մարիամը կը սիրէ, միթէ կընայ  
անոր բան մը մերժել: Օր մը Սրբուհի

Բրեգիտա լւեց, որ Յիսուս Քրիստոս իր Աստուածամօր կ'ըսէր. «Մայր իմ, զքեզ որչափ սիրելս դիտես. ուզածդ ինդրէ ինձմէ եւ ինչ որ ինդրես պիտի ընդունիս: Որովհետեւ, Մայր իմ, երկրի վրայ եղած ատենս զուն ինձ բան մը չմերժեցիր, չտալ չըրիր: Արդարութիւնը կը պահանջէ, որ հիմայ ինձ հետ երկինքը դառնուած ատենդ ես ալ բան մը չմերժեմ քեզ: — «Արդարութիւնը կը պահանջէ որ ես ալ...»: Այս ինչ միիթարական խօսք. կ'ըսէ Սուրբն Ալֆօնսոս Լիկուորի:

Մարիամ Մայր կրնայ զիս արքայութիւն տանիլ. որովհետեւ,

Բ. Արքայութեան Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Մայրն է: Աստուածամօր կուսին աղօթքները, կ'ըսէ Սուրբ Անտոն, Մօր մը աղօթքն ըլլալով Յիսուսի Քրիստոսի վրայ հրամանի մը զօրութիւնն ունին, պատուերի մը տեղը կ'անցնին եւ հետեւաբար անկարելի է որ լսելի չըլլան:

Ամենասուրբ կոյսն Մարիամ, երբ մեզ համար բան մը ինդրելու ըլլայ, կ'ըսէ Դամիանցի Սուրբն Պետրոս, կերպով մը հրաման կու տայ քան թէ կ'աղաջէ: Իր

աղօթքը՝ ոչ թէ աղախինի մը, հապա Տիրուհիի մը, թագուհիի մը աղօթքն է: Ինչ որ Աստուած իր ամենակարողութեամբ կրնայ ընել, կ'ըսեն ուրբերը, իր աղօթքներովը կրնայ նոյնն ընել Մարիամ Աստուածամօր: Անուն մ'ունի որ միայն իրեն կը վայելէ, միայն իրեն կրնայ տրուիլ: Այս անունն է մոտ անհնարու աղջրաւիս:

Ահա այսպիսի Մօր մ'է, որ պիտի աղօթեմ թէ ուրիշներուն եւ թէ ինձ համար: Եւ ինքզինքս քաջալերելու, զօրացնելու համար կրնամ մոքէս անցնել ու ըսել. Մարիամ Մայր կրնայ զիս արքայութիւն տանիլ:

### Ճ. Ա. Օ Պ

Մարիամ Մայր կրնայ զիս արքայութիւն տանիլ:

Ոչ միայն իր սիրոյն եւ հաւատարմութեան, ոչ միայն երկնից եւ երկրի թագուհի ըլլալուն համար Մարիամ Մայր կրնայ զիս արքայութիւն տանիլ, այլ որովհետեւ,

Գ. Ինչպէս որ արդէն տեսայ ու հասկցայ Ամենասուրբ Կոյսն Մարիամ զիս կը սիրէ: Եւ Սուրբ մը կ'ըսէ թէ Աստուածածին առանձինն՝ արքայութեան բոլոր հրեշտակներուն եւ բոլոր սուրբերուն միատեղ զմեղ սիրածէն՝ աւելի կը սիրէ զմեղ:

Եթէ Ամենասուրբ Կոյսն Մարիամ զիս կը սիրէ, տարակոյս չկայ, որ կ'ուզէ զիս արքայութիւն տանիլ: Աշխարհիս վրայ ինձ ցցուցած սէրը, ինչնուս պիտի ծառայէր, եթէ վերջապէս զիս ձեռքէ պիտի ձգէր, երեսէ պիտի թողուր: Մէկը սիրել բուելը, անոր կարեւոր եղած բաներուն ամէնէն օգտակարը սիրուած անձին տալ ըսել չէ միթէ, առ պայմանաւ որ այդ բանը սիրողին ձեռքէն գայ, անոր կարողութեան եւ տրամադրութեան տակն ըլլայ: Արդ՝ երկինքէն աւելի աղէկ Բ'նչ ունիմ եւ Բ'նչ կրնամ ունենալ:

Ո՛չ, ո՛չ. Մայր իմ Աստուածածին, ես քեզմ ոչ հարստութիւն կ'ուզեմ, ոչ փառք, ոչ յաջողութիւն: Իմ քեզմէ ուղածս երկինքն է: Յակիտենականութեան համար միայն երկինքն է, զոր ես կը ինդրեմ քեզմէ: Քու Աստուածային

Որդիդ եւ զսյն քեզ հետ միասին վայեւլէնիս է իմ քեզմէ ինդրածս:

Գ. Մտածում մ'եւս կու գայ միտքս, զիս կը զօրացնէ եւ ինձ բուել կու տայ թէ Մարիամ Մայր կրնայ զիս արքայութիւն տանիլ: Սուրբ Ալփոնսոս Լիկուուրիի խօսքերն են, զոր կը յիշեմ: “Երախտագիտական օրէնքով եւս Մարիամ Մայր ստիպեալ է զմեղ փրկելու” եւ զմեղ արքայութիւն տանելու: Արգարեւ Մարիամ Աստուածածին իր ամէն ունեցածը մեր պատճառաւ եւ մեզ նկատմամբ չէ, որ ստացած է: Մեր պատճառաւ, նյն իսկ մեր մեղաւորացս պատճառաւ չէ, որ բոլոր կանանց մէջէն ընտրուեցայ Աստուածամայր ըլլալու համար: Եթէ զմեղ փրկելու համար, Աստուած մեզ նման մարդ ըլլալու աստիճանին զմեղ սիրած չոլլար, Մարիամ Մայր պիտի ըլլար, ինչ որ է հիմայ, այսինքն Աստուածամայր: Իր ընդունած շնորհքները պիտի ունենա՞ր: Իր հիմակուան վայելած այնչափ վեհ ու վսեմ առանձնաշնորհմանց պիտի արժանանա՞ր:

Այս ամէնը գիտնալով, Տիրամայրնիս Մարիամ, կրնամ մեզ նկատմամբ ապերախտ

գտնուիլ, կրնար զմեղ գորովագութ  
սիրով չփրել: Կրնար չաշխատիլ իր բո-  
լոր կարողութեամբ, զօր իր Աստուածա-  
մայրութեան տիտղոսը կու տայ իրեն:  
Կրնար չաշխատիլ 'ի նպաստ անոնց, որ  
ինքնինին իրեն կը յանձնեն: Ընդհակա-  
ռակը, կրնար թոյլ տալ որ իրեն աղօ-  
թաղներէն նոյն իսկ մէկը գատապարտուի  
եւ կորսուի յաւիտեան:

Ես ալ վատահութեամբ կ'ուզեմ ըսել  
եւ նորէն ըսել. Մարիամ Մայր կ'ուզէ  
եւ կրնայ զիս արքայութիւն տանիլ:

### Ժ. Յ Բ

Մարիամ Մայր զիս արքայութիւն  
պիտի տանի:

Մարիամ Մայր զիս արքայութիւն  
պիտի տանի. որովհետեւ միշտ պիտի  
սիրեմ զինքը, միշտ պիտի աղթեմ եւ  
ծառայեմ իրեն:

Ա. Միշտ պիտի սիրեմ զինքը: Սիրել  
ըսելն ուրիշ բան չէ, եթէ ոչ մէկուն  
նկատմամբ ունենալ այնպիսի զգացում  
մը, որ զմեղ կը քաշէ եւ կը գարձնէ  
գէպ ի անոր. որ մեղ կամաւ անոր վրայ

մտածել կու տայ. որ զայն գոհացնելու  
եւ անոր հաճելիք ըլլալու միջոցներ փեն-  
տուել կու տայ մեղ, որ ցաւ զգալ կու  
տայ մեղ, երբ կամաւ կամ ակամայ  
անհաճոյ եղած ենք անոր:

Արդ՝ այս զգացումն ունիմ իմ Մա-  
րիամ Տիրամօրս նկատմամբ: Ամենաբա-  
րին Աստուած թոյլ տուաւ որ մատաղ  
մանկութենէս այս զգացումը գնեն սրտիս  
մէջ: Եւ Ամենաբարին Աստուած վշտա-  
ցուցած ատենս իսկ, բոլորովին մասնա-  
ւոր չնորհքով մը, այս զգացումը չնուա-  
զեցաւ եւ չմարեցաւ սրտիս մէջ: Եւ զիս  
աղէկի գարձնող, Աստուծոյ հետ հաշ-  
տեցնելու պատճառ եղողն ալ այս զգա-  
ցումն է:

Անտարակոյս ես ալ լաւ գիտեմ:  
Զգացումը 'ի բնութենէ շարժուն է,  
հետեւաբար անկայուն ու փոփոխական:  
Կը տկարանայ, կը փոփոխի, կը մարի,  
կ'անհետանայ: Բայց Մարիամ Աստուա-  
ծամօրս նկատմամբ զգացած երբեք չպի-  
տի փոփոխի երբեք չպիտի մարի եւ ան-  
հետանայ: Որովհետեւ

Բ. Միշտ Մարիամ Մօր պիտի աղօ-  
թեմ: Ազօթքը գերենական սիրոյ անունգն

է եւ կենարար կերակուրն։ Ազօթքը՝  
Մարիամ Աստուածամօրս հետ ունեցած  
խօսակցութիւնն է։ Ազօթքը՝ չմեղանչե-  
լու կամ մեղաց վիճակէն ազատելու հա-  
մար Մարիամ Տիրամօրմէս խնդրած Աս-  
տուածային օգնութիւնն է։ Ազօթքը՝  
վերջապէս շնորհչք ընդունելու, փորձու-  
թեանց դէմ զնելու, իր պարտականու-  
թիւնը կատարելու համար հարկաւոր  
եղած կամբն, ոյժն եւ զօրութիւնն ունե-  
նալու մէկհատիկ անվըիպելի միջոցն է։

Մարիամ Աստուածամայրս, քու պա-  
տուոյդ համար կենացս բոլոր օրերն ըսե-  
լու ազօթք մը պիտի որոշեմ։ “Առանց  
խօստովանահօրմն հրաման առնելու  
ուխտ չեմ ըներ, բայց այս խօստումը  
քեզ կ'ընեմ իմ կամքիս բոլոր զօրու-  
թեամբը, ներքուստ զգացած կարողու-  
թեանս բոլոր ուժովը։”

Այս, ամէն օր կամ վարդարանը աճ-  
բողովին կամ վարդարանէն գոնէ մաս  
մը պիտի ըսեմ։ Ո՞՛չ, մաքուր սիրտ ունե-  
ցողներուն որչափ սիրելի, որչափ հա-  
ճելի եւ ախորժելի կու գայ այս ազօթքը։  
Կամ “Յիշեա…” ազօթքը պիտի ըսեմ,  
ցաւի եւ նեղութեան մէջ եղողներուն

համար որչափ միսիթարական է այս  
ազօթքը։ Կամ “Ո՞վ թագուշի եւ Մայր  
իմ. . . պաղատանաց ազօթքը պիտի  
ըսեմ։ Փորձութեանց մէջ ով զգացած  
չէ անոր զօրութիւնը։ Ես այս ազօթք-  
ները պիտի ըսեմ քեզ նկատմամբ ունե-  
ցած սէրս սրտիս մէջ վառ պահելու եւ  
արծարծելու համար ով Ամենասուրբ  
կոյս Մայր իմ Մարիամ։

## Ժ. Գ. Օ Պ

Մարիամ Մայր զիս արքայութիւն  
պիտի տանի։

Այս, Մարիամ Մայր զիս արքայու-  
թիւն պիտի տանի, որովհետեւ ոչ միայն  
միշտ զինքը պիտի սիրեմ, ամէն օր իրեն  
պիտի ազօթեմ, այլ

Գ. Իրեն պիտի ծառայեմ հաւատար-  
մութեամբ կենացս ամէն օրերը։

Ծառայ բառը՝ իր բնդարձակ առ-  
մամբն եւ բուն նշանակութեամբն է այն  
անձն, որ վարի ծայրը վարձատրութիւն  
մը տեսնելով՝ առանց Աստուծոյ օրինաց  
դէմ զօրծելու, ուրեմն առանց մեղքի,  
կամաւորապէս իր կարողութիւնները, իր

անդամները, իր մարմինը, իր ժամանակը  
կը գնէ ուրիշի մը տրամադրութեան  
ներքեւ՝ անոր ծառայութեանն եւ օդ-  
տին գործածելու նպատակաւ։ Առանց  
մեղքի՝ տրամադրել կրցած բաներուն  
ամենը կը թողու ուրիշի մը։ Ահա այս  
պիտի ծառայական վիճակի մ'է որ ես  
կ'ուզեմ իմ անձս ենթարկել։ Ահա այս  
ծառայական պարտըն է, որ ես Մարիամ  
Տիրամօրս նկատմամբ կ'ուզեմ վրաս զնել։

Գիտեմ իր սրբութիւնն։ Ուրեմն եր-  
բեք բան մը չպիտի հրամայէ, որ Աս-  
տոււցոյ օրինաց համաձայն չըլլայ եւ կէտ  
նպատակին ու վախճանը զիս սուրբ ընել,  
զիս արքայութիւն տանիլ չըլլայ։ Գի-  
տեմ իր արդարութիւնը։ Ինձ երբեք  
բան մը չպիտի հրամայէ որ ինձ օդատա-  
կար եւ իմ կարողութեանս համեմա-  
տուած չըլլայ։ Բան մը չպիտի հրամայէ,  
որ իմ գերգաստանիս, իմ ընկերական  
դիրքիս, իմ վիճակիս պարտուց կողմանէ  
վրաս գրուած կամ ինկած պարտակա-  
նութիւնները կատարելուս հակառակի  
կամ արգելք ըլլայ։

Գիտեմ իր բարութիւնն։ Ուրեմն իր  
հրամայածները գիւրացնող միջները,

Հնարաւոր ընող չնորհքներն ինքն ինձ  
համար չընդունած բան մը չպիտի հրա-  
մայէ ինձ։ Աշխատութեանս միջոցին զիս  
պիտի քաջալերէ, ինձ խորհուրդ պիտի  
տայ, զիս պիտի զօրացնէ։ Իսկ աշխա-  
տութենէս վերջը միշտ պիտի վարձատրէ  
զիս։

Գիտեմ իր գթութիւնն։ Ախվին  
աղէկ չկատարած գործիս վրայ աչք պի-  
տի գոցէ։ Ինձ պիտի օգնէ, որ աղէկ  
չկատարած գործիս պակասը լրացնեմ։  
Եւ մանաւանդ երբ զիս հլու, հնազանդ  
եւ զղջացեալ սրտով տեսնէ, արժանա-  
ցած պատիժու ինձ տալ չպիտի թողու։

Ահաւասիկ, ես քու ծառայութեանդ  
մէջ եմ։ Այս իմ ծառայութիւնս քեզ  
ցուցնելու համար հետեւեալ համառօտ  
աղօթքն այս օր բոլոր սրտանց պիտի  
բում եւ նոյն չերմեռանդութեամբ պիտի  
կրկնեմ ամեն օր։

### Ա ՂՕ Թ. Ք

Ով թագուհի եւ Մայր իմ։ Ես  
իմ անձս քեզ կը նուիրեմ եւ իմ անձ-  
նուիրութիւնս քեզ ցուցնելու համար  
այսօր կը նուիրեմ քեզ իմ աչքերս,

իմ ականջներս, իմ բերանս, իմ սիրտս,  
իմ բոլոր անձս: Եւ բատ որում քեզ կը  
պատկանիմ, Մայր իմ ամենաբարի, պա-  
հէ զիս, պահպանէ զիս իբր քու բարիքդ  
եւ քու սեպհականութիւնդ. Ամէն:

## Ժ.Փ. Օ.Պ

Մարիամ Մայր իմ նմանիլ ուզած օրինակս է:

Ո՞վ Տիրամայր իմ Մարիամ, թոյլ  
տուր հոգւց մը, որու ապաստանը, նե-  
ցուկը, պաշտպանն եւ Մայրն ես: Գիտէ  
եւ կը հասկնայ թէ որչափ զինքը կը  
սիրես եւ կ'ուզէ բոլոր սրտով սիրել  
զ.քեզ: Թոյլ տուր, որ խանդակաթ սի-  
րով եւ գորովով մը քեզ նայի, ինչպէս  
մանուկ մը, որ իր մօրը գիմացն կեցած  
անոր խօսքերը, զգացումները, ընթացքը  
եւ շարժուածքը կը քննէ, կը զննէ,  
կ'ուսումնասիրէ եւ կ'ուզէ անոր նմանիլ  
ամէն բանի մէջ:

Մէկուն նմանիլ ըսելով կը հասկնանք  
անոր ձայնը, վարուելու եղանակները,  
արտաքին կերպերն առնել, որչափ որ  
հնար է իրագործել զանոնք: Մէկուն  
նմանիլ ըսել կը նշանակէ մանաւանդ

անոր ուզածն ուզել եւ անոր սիրածը սի-  
րել: Մէկուն նմանիլ ըսելով կ'իմանանք  
նաեւ անոր ճաշակէն զատ ուրիշ ճաշակ  
եւ անոր սրտէն բղեած փափաքէն զատ  
տարբեր փափաք չունենալով իր սէրն  
ու գորովն իր բարեկամին տալ եւ անկէ  
զատ ուրիշ բարեկամ չունենալ:

Ո՞չ, Մայր իմ Տիրամայր. այս ամսոյ  
մէջ միայն այդ է իմ ընել ուզածս եւ  
ընելիքս: Ասիկա այդպէս կ'ուզեմ, որով-  
հետեւ քեզ կը սիրեմ եւ կ'ուզեմ միշտ  
քեզմէ սիրուիլ: Եւ գիտեմ, որ սէրը  
միայն իրարու նմանող կամ իրարու  
նմանիլ ջանացող սոսկ երկու սրտի մէջ  
կրնայ գտնուիլ: Ասիկա այդպէս կ'ուզեմ,  
որովհետեւ գիտեմ, որ զքեզ ամենա-  
սուրբ եւ ամենակատարեալ Աստուծոյ  
սիրելի եւ հաճելի ընող առաքինու-  
թիւներ ունիս: Ես ալ այդ առաքի-  
նութիւններէն գոնէ մի քանին կ'ուզեմ  
իրագործել եւ իմ վրաս ցուցնել ար-  
գեամբ, որով կարենամ ես ալ հաճելի  
ըլլալ Աստուծոյ: Ասիկա այդպէս կ'ու-  
զեմ, որովհետեւ ես քուկդ եմ, քու  
զաւակդ եմ. որ տարիքի մէջ ալ գտնուիմ  
թող գտնուիմ: Գողգոթայէն 'ի վեր

ամէնքս ալ քու զաւակներդ ենք: Քու ծառագ եմ եւ արդարութեան տեսակէտով ու երախտազիտութեան նկատումով ստիպուած եմ քեզ տալ կեանքս, զոր ունիմ այս ժամուս, կեանքս, զոր կարելի է Աստուած ինձ թողած է քու ինձ համար ըրած աղջբքներուդեւ բարեխօսութեանդ պատճառաւ:

Այս ամսուան մէջ ջերմեռանդական հրահանդներուն կանոնաւորապէս զարու եւ ինձ տուած ու այսուհետեւ տալիք ամէն խրատուցդ եւ արդարարութեանցդ հլու, հնազանդ ըլլալու խոստում կը նորոգեմ վերստին:

## ԺԵ. Օ Բ

Մարիամ Մայր իմ օրինակս է:

Աստուածածին եւ աղօթք:

Ամենասուրբ Կոյսն Մարիամ անդուլանդագար կ'աղօթէր: Իր կեանքը ջերմեռանդական հրահանդաց շարք մը կը կազմէր: Կ'աղջթէր միշտ եւ հանապազնոյն իսկ սովորական եւ առտնին գործեր կատարելով:

Աղօթք ըստածնիս Աստուծոյ ուղղուած գովարանութեան, շնորհակալութեան կամ սիրոյ խօսքը չէ միայն: Այս, ասոնց ամէնն է, բայց մանաւանդ Աստուծոյ եւ մարդուս հոգւյոն միջեւ եղած սովորական յարաբերութիւնն է, որ իր մօրմէն չբաժնուող տղուն կեանքէն աւելի լաւ կերպով ներկայացնող բան չկայ աշխարհիս երեսը: Մանուկն իր մօր վրայէն չի հեռացներ իր աշքը, իր մօրմէն չի բաժնուիր, նոյն իսկ իր զգուանաց եւ զուարձութեանց ժամանակ: Խելքը, միտքը, սիրազ իր մօր հետ է միշտ: Եթէ մասնուկը հանգստանայ, կամ մօրը գիրկը կամ մօրը հագիստ առած անկողնոյն քովք կը հանգչի: Նոյն բանն է Աստուծոյ եւ Ամենասուրբ կուսին Մարիամ Մօր համար:

Մարիամ Աստուածամօր աղօթքն՝ անոր շրթունքէն ելած ատեն պարզ էր: Անոր աղօթքին թէ խօսքերը պարզ էին եւ թէ զգացումները: Ամենասուրբ Կոյսն Մարիամ կը պաշտէր զԱստուած եւ իր երկրպագութիւնն կը մատուցանէր Աստուծոյ: Կը սիրէր զԱստուած եւ իր սէրը կը ցուցնէր Աստուծոյ: Շնորհակալ

Կ'ըլլար Աստուծոյ եւ իր զգացածին պէս  
իր շնորհակալութիւնը կը յայտնէր Աս-  
տուծոյ: Ո՞՛հ, Ամենաբարին Աստուծոյ  
հետ վարուած ատենիս այնպէս բարա-  
կէն բարակը փնտռելու հարկ չկայ: Ունե-  
նանք պարզութիւն ներքին, ունենանք  
պարզութիւն արտաքին: Աստուածածին  
կ'ազօթէր շատ մեծ յարգանօք եւ հա-  
մեստութեամբ, բայց իր վրայ այնպէս  
ցուցմունք կամ արուեստականութիւն,  
խստութիւն եւ տարօրինակ սովորու-  
թիւններ չէին. նշմարուիր: Իր գէմքին  
հանգարտութիւնն, իր ճակտին պայծա-  
ռութիւնն, ամէն բանի մէջ իր ցցուցած  
խաղաղութիւնը զինքը տեսնողներուն  
ըսել կու տար. Մարիամ Տիրամայր կ'ա-  
պրի եւ կը խօսի Աստուծոյ հետ:

Ամենասուրբ Կոյսն Մարիամն ալօթքը  
կանոնաւոր էր: Աստուծոյ հետ մասնաւոր  
խօսակցութեան ժամեր որոշած էր իրեն:  
Եւ այս ժամերէն մին գալուն պէս կը թո-  
գուր այն ամէն զբաղութմերը, զորս ընկե-  
րութիւնն եւ կամ վիճակին պարագը իր  
վրայ իբր բեռ չէր գներ. ու կ'ըսէր ինք-  
իրեն. ժամ է ալօթելու. կենալ չ'ուլլար.  
Աստուած կը սպասէ ինձ:

Ո՞վ Աստուածամայր իմ Մարիամ, ես  
ալ վերջապէս Ե՞րբ պիտի աղօթեմ քեզ  
նման: Ե՞րբ աղօթքն ինձ համար եւս  
պիտի ըլլայ զբաղութմերուն ամենալուրջն,  
ամենակարեւորն, ամենասիրելին:

## Ժ. Զ. Օ Պ

Մարիամ Մայր իմ օրինակս է:  
Աստուածածին եւ իր ընտանիքը:

Մարիամ Աստուածամայր կը ճանչնար  
մանկան մը իր ծնողաց նկատմամբ ունե-  
ցած պարտքը: Դեռ ինքը շատ պղտիկ  
եղած ատեն բաժնուեցաւ իր հօրմէն եւ  
իր մօրմէն: Բայց ոչ միայն իր արտին մէջ  
կը պահէր անոնց սիրոյն եւ գորովին յի-  
շատակն, այլ նոյն իսկ անոնց գէմքը կու  
գար կը պատկերանար իր աշաց առջեւ:  
Ոչ, ոչ, Աստուած չ'ու զեր, որ ծնողքները  
մոռցուին:

Մարիամ Աստուածամայր կը յարգեր  
իր ծնողքը: Ո՞՛հ, զինքը տեսնելու համար  
իր հօրն ու մօրը տաճար եկած ատեն այդ  
երջանիկ ժամերուն անոնց առջեւ Ամենա-  
սուրբ Կուսին ցցուցած յարգանաց զգա-  
ցութմերն ովկ պիտի կարենայ մեզ պատ-

**ԱԼ** ու ըսել: Անոնց խօսքերը որչափ  
ուշադրութեամբ մտիկ կ'ընէր: Իր ծնո-  
ղաց ըստածները գնահատելը ինչպէս աղէկ  
մը անոնց ալ կը ցուցնէր: Որչափ հյու-  
եւ հնազանդ էր անոնց կամաց եւ փա-  
փառանաց:

Մարիամ Աստուածամայր կը սիրէր իր  
ծնողքը: Բայց կը սիրէր այն գորովալից  
սիրով, որով մեր սիրած անձերնուու, սի-  
րականներնուու մօտ գտնուած եւ ընկերու-  
թիւնը վայելած ատեննիս մեր ուրախու-  
թենէն սրտերնիս կը խայտայ ու կը  
տրոփէ: Կը սիրէր այն հաճոյարար եւ գո-  
րովական սիրով, որ ամէն ցաւոց ինչպէս  
նաեւ ամէն ուրախութեանց մասնակից  
կ'ըլլայ: Կը սիրէր այն հանձարեղ սիրով,  
որ միջոցներ փնտուել կու տայ միշտ անոնց  
հաճելի եղածը գուշակել եւ գտնելու  
համար Կը սիրէր այն գթութեան սի-  
րով, որ քաջալերելու, միսիթարելու մի-  
ջոցներ փնտուել կու տայ: Վերջապէս կը  
սիրէր այն գերբնական սիրով՝ որ անոնց  
համար աղօթել կու տայ ամէն օր, որ  
մինչեւ իսկ մեղմօրէն կ'երթայ բարու-  
թեամբ, անուշեկ խօսքերով եւ նոր նոր  
բարեգործութեամբ անոնց կ'իմացնէ իր

կտքը եւ կը զգացնէ իր տրամադրութիւն-  
ները, կը նպաստէ անոնց սրբութեանը:  
Ո՛հ, եթէ գեռ հիմակ ծնողքս մեռած  
չեն եւ իրենց ներկայութիւնը վայելելու  
բարեբախտութիւնն ունիմ, ով Տիրամայր  
իմ Մարիամ, ես ալ քու օրինակիդ հե-  
տեւելով անոնց նկատմամբ պիտի վա-  
րուիմ յարգանօք եւ սիրով: Իսկ եթէ  
մահն եկած, զանոնք ինձմէ բաժնած է,  
պիտի աղօթեմ անոնց հոգւոյն համար:

Ամենասիրելի ծնողք իմ, որոնց կարելի  
է ցաւ պատճառած եմ շատ անգամ, ինձ  
ներեցէք: Եւ եթէ այսօր ինձ հնարաւոր  
ըլլայ, ձեր փափառանաց հանդեպ ունե-  
ցած ակնածութեամբս, գոնէ աղօթքնե-  
րովս պիտի հետեւիմ Ամենասուրբ Կու-  
սին Մարիամու օրինակին այն ամէն յա-  
րաբերութեանց մէջ, զոր ունեցաւ իր  
ընտանեաց նկատմամբ:

### ԺԷ. ՕՐ

Մարիամ Մայր իմ օրինակս է:  
Աստուածածին եւ իր մեծերն ու մեծաւորներն:

Ամենասուրբ Կոյսն Մարիամ երջանիկ  
էր միշտ մէկէ մը կախում ունենալուն

առթիւ : Վերջը վերջը երբ Յիսուսի Քրիստոսի բերնէն՝ ոչ թէ ծառայութիւն ընդունելու, հապա ծառայութիւն մատւցանելու եկայ խօսքերը լսեց, հոն գոռաւ եւ ճանչցաւ միշտ իր սրտին խօրը զգացած զգացումները : Հպատակութեան այսինքն ուրիշէ մը կախում ունենալու այս զգացումն է, որ աւելի ճշտութեամբ կը ցուցնէ մարդուս սրբութիւնն ու կատարելութեան աստիճանը :

Աստուած իմ, մեր ամենուն վրայ կը գտնուի հպարտութիւն : Ամենասուրբ կոյսն Մարիամ պղտիկ եղած ատենը տառարին մէջ ունեցաւ մեծեր : Վերջերը Հայր Յայսեփայ իշխանութեան տակ դրաւ ինքինքը : Բոլորովին վերջը Յիսուս Քրիստոս երկինք համբառնալին յետոյ, զնաց ինքինքը դրաւ Յովհաննէս առաքեալին իշխանութեան տակ եւ կ'երթար կանոնաւորապէս անկէ կ'ուզէր ու կ'ընդունէր Ամենասուրբ Հաղորդութիւնը յարդանօք :

Աստուածածին իր մեծերուն անձին մէջ կը տեսնէր զԱստուած, որ իր իշխանութիւնը հաջորդած է անսոնց : Այս բարի տրամադրութեամբ իր մեծերուն

հրամանները կատարելով, գործադրած կ'ըլքը նոյն ինքն Աստուծոյ կամքը : Միթէ չտեսամ զՅիսուս, որ ամէն պարագաներու եւ ամէն բանի մէջ միշտ կը հնազանդէր իր անոր հրամայածներուն : Այս յիշտամակը՝ հնազանդութեան նկատմամբ որչափ անհօւն գորովով, անբաւ սիրով լեցուցած ըլլալու է իր անձը :

Ով Տիրամայր իմ Մարիամ, Յիսուսի հնազանդութեան եւ քու հնազանդութեանդ յիշտամակը միտքս ձգէ շատ անգամ : Զըլլայ որ գլուխ քաշեմ : Մի թողուր, որ երբեք բացարձակ անկախութեան, ազատութեան մէջ թողուրիմ ու կորսուիմ : Ո՛հ, տուր ինձ, Մայր իմ Ամենաբարի, տուր ինձ, որ հօգևով մարմնով, բոլոր սրտով հնազանդիմ թէ Սուրբ եկեղեցւոյ վարդապետութեանց եւ թէ Արքազան Քահանայապետին խօսքերուն Մանաւանդ այս երկուքին հանդէպ անանկ մէկ հնազանդութիւն մ'ունենամ, որ երբեք յանդզնութիւն չունենամ, նոյն իոկ մոտէս չանցնեմ քննել, գտատել, վիճել, վիճաբանել անսոնց վճիռներն ու որոշաւմները : Ընդհակառակն

անոնց ամէն սորվեցուցածին ըսեմ միշտ.  
կ'ընդունիմ եւ կը հաւատամ:

## Ժ Բ. Օ Բ

Մարփամ Մայր իմ՝ օրինակս է:  
Տիրամայրն Մարփամ եւ Աստուածային կամըլը:

Սրբոյն Փրանկիսկոս Սալեզացւոյն սրտին  
սա նկարագրական պատկերը Աստուա-  
ծամօր Կուսին սրտին մէկ ցոլացումը չէ:  
Մարփ ընենք. Հաւասարապէս կը սիրէր  
անուշը եւ լեղին, հանգասութիւնն եւ  
տաժանելի աշխատութիւնը: Լիսվին կը  
գնահատէր մաքուր սէրը, իսկ կ'արհա-  
մարհէր կեանքն ու մահը: Եւ ասոնցմէ  
մին միւսէն վեր չէր դասեր, կամ մէկուն  
սերտիւ յարելու համար միւսէն չէր խոր-  
շեր, մինչեւ որ Աստուծոյ յաւիտենա-  
կան մեծվայելչութիւնն՝ իրեն հա-  
ճելի եղածը չյայտնէր անոր: Որով-  
հետեւ երբ Աստուծոյ կամքը յայտնուէր  
իրեն, ո՛չ, այն ատեն որոշումը կ'առնէր  
անմիջապէս:

Եւ այս ամէնը ներքուստ կը զգար  
առանց վրդովման, առանց այդպէս  
“կ'ըլլայ” կամ “չըլլար” բաելու, առանց

հակառակութեան մէյ մը “այսոյ մէյ մը  
առչողի. հապա ամենային հեղութեամբ  
եւ հանգարտութեամբ: Այս, ամենային  
հեղութեամբ, առանց երկեայութեան  
ինչպէս նաեւ առանց դժկամակութեան:

Սելովմա աւազանին ջուրերը, կ'ըսէ  
Սուրբ Գիբրէր, կը վաղէին առանց ձայն  
հանելու, այսինքն այնպէս աննշմա-  
րելի կերպով մը կը հոսէին կ'երթային,  
որ կարծես թէ ջուրերը աւելի կը ծփային  
քան թէ կը վաղէին: Այդ աւազանին  
ջուրին երեսոր հաղիւ հաղ ծածանում մը,  
ծփում մը կը տեսնուէր: Նմանապէս  
Աստուծոյ կամաց եւ հաճոյից նկատմամբ  
ունեցած իր համակերպութիւնն այնչափ  
հեղիկ մեղմիկ, այնչափ լոփի մնջիկ կ'ըլ-  
լար, որ ամենափօքրիկ կարկաչ մ'անգամ  
չէր լսուէր. սրտի ամենաթեթեւ փրփրալ  
մ'անգամ չէր նշմարուէր: Այսու հան-  
գերձ ամենափափուկ եւ ամենազգայուն  
սիրտ մը կը կրէր:

Այս ամենը Սրբոյն Սալեզացւոյն սրտին  
համար ըսուածէ, բայց, ո մայր իմ Մա-  
րփամ, քու սիրտ այսպէս հանդարտէ,  
եւ եւս առաւել: Ես քու սիրտ ուրիշ  
կերպով չեմ կընար երեւակայել, եթէ

ոչ միշտ աչքի եւ երեսդ երկինքի կողմը  
գարձուցած, կամքդ ու սիրադ միշտ Աս-  
տուածային կամաց հպատակեցուցած: Ինձ  
համար եւս ընդունէ նցին չնորհքները:

Քեզ պատահած յաջողութիւնները եւ  
ձախորդութիւնները կ'ընդունէիր խաղա-  
ղութեամբ եւ սրտի հանդարտութեամբ,  
որովհետեւ զիտէիր թէ ամէնն ալ կը  
պատահէր Աստուծոյ հրամանաւ: Ամէնը  
կ'ընդունէիր վստահութեամբ, որովհետեւ  
զիտէիր թէ ինչ որ Աստուծոյ կողմանէ  
պատահէր բարի եր եւ իրաւացի: Ամէնը  
կ'ընդունէիր երջանկութեամբ, որովհետեւ  
զիտէիր թէ զայն ընդունելով Աստուծոյ  
համաց պատառամած կ'ըլլաս: Անտարա-  
կյս Աստուծած քեզ յայտնած ըլլալու է  
վերջը Յիսուսի շրթունքն ինկած սա  
խիստ քաջալերական եւ զրացուցիչ  
աշօթքը. “Եղիցին կամք քո որպէս յեր-  
կինս եւ յերկրին:

Ո՛վ Մայր իմ Մարիամ, տուր ինձ  
Աստուծոյ կամաց համակերպելու սէրը:  
Տար որ սիրեմ Աստուծոյ կամքը: Միթէ  
աւելի երջանիկ չեմ ըլլար եթէ թողում,  
որ միշտ անհունապէս բարի եղաղ նա-  
խախնամութիւնը գործէ միս:

## ԺԹ. 0 թ

Մարիամ Մայր իմ օրինակս է: — Աստուա-  
ծածին եւ Ամենասուրը Հաղորդութիւնն:

Սուրբ առաքելոց անմահ պատարագ  
մատուցանել սկսելէն 'ի վեր Մարիամ  
Աստուածածին ամէն օր կ'ընդունէր Վան-  
նասուրբ Հաղորդութիւնը: Բանիբուն եւ  
բանիմաստ մարգոց բածին նայելով՝  
Հաղորդութեամբ ընդունած Յիսուսի  
Քրիստոսի մարմին իր կուրծքին ու սրտին  
մէջ Հաղորդութեան տեսակաց ներքեւ  
առանց ապականելու կը մնար մէկ հա-  
ղորդութիւն առած օրէն մինչեւ միւս  
հաղորդութիւն առած օրը:

Այս միիթարական եւ բարեպաշտ  
մատումնելր սկզբիս պայծառ լուսերով  
կը լուսաւորեն իմ միտքս: Մարիամ  
Աստուածամօր սիրու ու հոգին Յի-  
սուսի Քրիստոսի կենդանի տապանակն է  
մշտնչենաւորապէս: Յիսուս Քրիստոս միշտ  
եւ հանապազ կը գործէր այս հոգւոյ մէջ:  
Անոր կամքը օրէ օր աւելի կը համակեր-  
պեցնէր Աստուծոյ կամացը, այնպէս որ  
Աստուածածին ինքն ալ կը մտածէր մի.  
այն Յիսուսի Քրիստոսի մտածածին վրայ,

կը սիրէր միայն Յիսուսի սիրածը, կ'ու զէր  
միայն Յիսուսի ուզածը:

Ասկէ զատ Յիսուսի փառաւորութեան  
վիճակին մէջ հիմակուան գործել չկնառ-  
վէր առաքինական գործերը Մարիամ  
Աստուածածին կ'իրագործէր իր կենացը  
մէջ: Աստուածամայր գործով կը համա-  
պատասխանէր Ամենասուրբ Հաղորդու-  
թեան մէջ Յիսուսի ունեցած խոնարհու-  
թեան վիճակին եւ խօնարհամութեանը:  
Մարիամ Աստուածածին ներկայ չար-  
չարանքներով եւ տառապանքներով կը  
համապատասխանէր Յիսուսի զահողու-  
թեան վիճակին:

Յիսուսի անծանօթ եւ աշխարհքէ  
քաշուած կեանքը պատուելու համար  
Աստուածածին ինքինքը կ'ոշնչացնէր եւ  
արտաքուստ մարդկային կերպարանք մը  
միայն թողելու, իսկ ներքուստ բոլորովին  
Յիսուսի Քրիստոսի փոխուած ըլլալու կը  
ջանար:

Ինչպէս որ Յիսուս Քրիստոս աղքատ է  
Ամենասուրբ Հաղորդութեան մէջ, նմա-  
նապէս Աստուածածին եւս աղքատ է,  
Կոյն իսկ աւելի աղքատ է, քանի որ  
չքաւորութեան, իրական զրկման ու կա-

րօտութեան ինչ ըլլալը փորձով կը տես-  
նէ իր անձին վրայ: Յիսուսի Քրիստոսի  
նման ինքն եւս կը հնազանդի եւ եկե-  
ղեցւոյ ամենայետին պաշտօնեային հնա-  
զանդելով Յիսուսի Քրիստոսի խորհրդա-  
ւոր հնազանդութեան կարծես ճիշդ  
նմանը կը ցուցնէ:

Ո Տիրամայր իմ Մարիամ, ինձ օգնէ,  
որ ես ալ քեզ նման հաղորդասիրական  
կեանք մ'անցնեմ: Իմ հաղորդութիւն  
առած օրերս աղօթքի, հնազանդու-  
թեան, Աստուածասիրութեան, ընկերսի-  
րութեան, աշխատութեան, բայց Յիսուսի  
հետ եւ Յիսուսի սիրոյն համար տեսնուած  
աշխատութեան մէջ մէկ օր թող ըլլան:

Միշտ քեզ համար եւ քեզ հետ է, որ  
Սուրբ եւ անմահ սեղանին պիտի մօտե-  
նամ: Քեզ պիտի աղօթեմ Ամենասուրբ  
Հաղորդութենէն թէ առաջ եւ թէ ետքը:

### Ի. Օ Պ

Մարիամ Մայր իմ օրինակս է:  
Աստուածածին եւ փորձամքներ ու ալէտներ:

Թող զիս, ով Տիրամայր իմ Մարիամ,  
որ քանի մ'օր միայն քու մանկութեանդ

կեանքը զննեմ, քննեմ եւ ուսումնափրեմ, Այն ատենները գեռ Յիսուսի ներկայութեամբը քաջալերուած կամ յիշատակվը զօրացած չէիր: Այն ատենները մարդկային տեսակետով աւելի տկարկերեայիր: Ուր ուրեմն ինձ տալիք դասերէդ եւ խրատներէդ աւելի պիտի զդացուիմ եւ անոնց հետեւիլ ինձ աւելի դիւրին պիտի դայ:

Ունեցա՞ր արդեօք, ո՞լ Տիրամայր իմ Մարիամ, մանկութեան կենաց օրերուդ մէջ դուն եւս ունեցա՞ր այն տրտմութիւնն կամ ձանձրութիւնն, որ կը ծանրանայ սրտիս վրայ եւ կը ծանրանայ այն տափա՞նն, որ կեանքը ինձ վլրջին ծայր դժուար եւ ծանր կու գայ: Գուն ալ քաշեցիր արդեօք հոգւոյ եւ սրտի այն վիշտն ու տառապանքն, որ շատ անդամ աշքի արցունք թափել կու տան ինձ: Ունեցա՞ր վերջապէս հակառակութեան օրեր, որ զիս տակն ու վրայ կընեն շատ անգամ:

Այս, զաւակս, ատոնց ամէնն ունեցայ ի բաց առեալ այն ցաւերն, որ (ներդորձական) հիմակուան մեղքի պատիժը կամ հօգույն մէջ մարդուս ներքին կիր-

քերուն հետեւանքն են: Իմ Անարատ Յզութիւնս ատոնցմէ զերծ ու ազատ կացուցած է զիս: Այն, ես ամենուն համն առի: Ես ալ քեզ նման իմ վրաս փորձով տեսայ, թէ ինչ են եղեր սրտնեզութիւնները, հակառակութիւններն եւ խարդութիւններն: Քեզ նման ես ալ շարչարանք քաշեցի: Խօսքս մանկութեանս ատեն քաշած շարչարանացս վրայ է: Անկէ ոչ գուբս ելլել, ոչ հեռուն երմալ կ'ուղեմ, ոչ ալ յիշել Գողգոթալ լըրան գլուխը կրած նեղութիւններս, որոնց համար, լաւ գիտեմ, պէտքն ունեցայ բղորովին մասնաւոր շնորհքի մը:

Արդ՝ իմ շարչարանքս ու տառապանքս, Աստոծոյ ուրիշներէն աւելի սիրած հոգիներուն, ուրիշներէն աւելի ուզած ծառայից կրածներուն ճիշդ նմանն եղան: Այս, ես ալ շխնայուեցայ: Բայց միթէ շարչարանքը ամենուն օրական հացը չէ: Եւ միթէ առանց շարչարանքի անցած օր մը առանց արդիւնքի անցած օր չէ սեպո՞ր:

Բայց, սիրելի օրդեակս, իմ սիրտս նեղուած օրերն՝ ես Աստոծոյ կը մօտենալի աւելի սիրով, կ'աղօթէի աւելի ջերմե-

ռանդութեամբ, կը սպասէի աւելի համը  
բերութեամբ։ Մարդուս սրտին մէջ ծա-  
գած փոթորիկներն ալ օդին մէջ ծա-  
գածներուն պէս կը հանդարտին, կ'անց-  
նին կ'երթան։ Երբ քիչ շատ ծանր խօսք  
մը լսէի, խոնարհելու առիթ մ'ունենայի,  
նմանապէս ամէն անգամ որ խաչ մը, ցաւ  
մը, չարչարանք մը ներկայանար ինձ, ինք-  
զինքս աշխատութեան կու տայի աւելի  
եռանդով։ կ'աղօմէի աւելի ջերմեռան-  
դութեամբ։ Աղօմքն, աշխատութիւնն,  
առաքինասիրութիւնը միշտ կը թողւն  
մարդուս գէմքին վրայ խնդութիւն,  
խղճմանքին մէջ խաղաղութիւն, սրտին  
մէջ ուրախութիւն։

## Ի Ա. Օ Պ

Մարիամ Մայր իմ օրինակս է։  
Աստուածածին եւ հակառակութիւնը։

Երկար ատեն, ով Տիրամայր իմ Մա-  
րիամ, չկրցայ խելքիս տեղ ընել տալ, որ  
քու մանկութեանդ ատենուան ունեցած  
ընկերներուդ մէջ եւ վերջը հասուն հասա-  
կիդ ժամանակ քեզ հետ ապրող անձանց  
մէջ գտնուէին այնպիսիներ, որոնց սրտերը

զքեզ սիրած չըլլան։ Դուն որ պ'յնչափ  
բարի ես, հնար էր, որ զքեզ ատէին։  
Դուն որ պ'յնչափ անձնուէր ես, հնար էր,  
որ քու ըսածդ ու ըսածդ դատէին։ Դուն  
որ պ'յնչափ ընկերասէր ու մարդասէր ես,  
հնար էր, որ քեզ հակառակէին։

Ո՛հ, Որդեակս, Յիսուս ինձմէ աւելի  
հեզ եւ խոնարհ, քաղցը ու անձնուէր,  
ընկերասէր ու մարդասէր էր։ Այսու հան-  
գերձ ունեցաւ թշնամիներ եւ հակառա-  
կորդներ։ Ես ալ ունեցայ իմիններս։  
Ասով թող չեղակացուի եւ չհասկցուի  
թէ զիս չսիրող անձինք չար էին։ Ո՛չ։  
Միայն իրենց բնաւորութիւնն իմինիս  
հակառակ ըլլալով՝ զիս տեսած տաեննին  
կրնար վրանին նեղութիւն մը գալ։ Հար-  
կաւ ասոր պատճառն իրենք եւս չէին  
կրնար շատ անգամ հասկնալ եւ կարծես  
՚ի հարիէ ստիպեալ կը սկսէին ինձ հետ  
վարուիլ նուազ քաղցրութեամբ եւ վա-  
րուիլ նուազ մեղմութեամբ։ Կարելի է  
ինձ նկատմամբ Աստուծոյ բարութիւնը  
նոյն իսկ երբեմն գէշին մեկնելով եւ Աս-  
տածոյ՝ ինձ զրկած փորձանքները չտես-  
նելով կը կարծէին թէ իրենց զրկանք  
մ'եղած է, կամ երեսի վրայ թողուած

Են: Իրենց ցաւն ու տառապահքն շատ  
անդամ արտաքուստ գժկամակութեամբ  
եւ սրտմտութեամբ կը յայտնուէին:  
Աւելի գժբախտ էին քան թէ չարասիրա.  
ուրեմն արժանի ամէն արդահատանաց:  
Այս պատճառաւ շատ անդամ կ'աղօթէի  
անոնց համար:

Որդեակս, եթէ զքեզ չփրող անձանց  
կողմանէ զրկանք մը տեսնես, անոնց գէմ  
սի մի պահէր: Ազօթէ անոնց համար եւ  
մատուցանել կրցած ծառայութիւններդ  
երբէք մի մերժեր անոնց եւ մի զանար  
անոնցմէ: Զարի փօխարէն բարիք հա-  
տուցանել, ահա Աստուածային գործ  
մը, ահա մարդո՞ որդի Աստուծոյ բնող  
գործ մը:

### ԻԲ. ՕՐ

Մարիսմ Մայր իմ օրինակս է:  
Աստուածածին եւ շարերը:

Երէկ, որդեակս, քեզ խօսեցայ այն  
անձանց մասին, որ զիս չէին սիրեր բնա-  
ւորութեան հակառակութեամբ եւ սրտիս  
ցաւ կը պատճառէին այս մերթ մանր եւ  
մերթ մեծ հակառակութիւններով, որ

ամենօրեայ կենաց մեջ շատ պատահա-  
կան են եւ սովորական: Ասոնցմէ զատ կը  
գտնուէին ուրիշ անձինք, որոնց վարքին  
ու ընթացքին վրայ աւելի ցաւելու է  
մարգս: Այս վերջնները սատանային  
գրգումներուն եւ թելագրութիւններուն  
ականջ դնելով՝ խօսիս, գործքիս, կե-  
ցուածքիս, շարժուածքիս եւ քալուած-  
քիս մեջ կը կարծէին տեսնել եւ գտնել  
այնպիսի դիտաւորութիւններ, զոր ես ոչ  
միայն չանէի, հապա մտքէս իսկ չէի  
կրծար անցնել: Երբէմն ալ նոյն իսկ ինձ-  
մէ հեռուները կը փախչէին, ինձ նկատ-  
մամբ գէշ կը խօսէին:

Ո՛չ, զանոնք այնպէս տեսնելով որչափ  
կը ցաւէի, որչափ կը մորմոքէր սիրոս:  
Այսու հանգերձ անոնց ամէնն ալ կը  
կրէի համբերութեամբ: Երբէք բերնէս  
արտունջ մը չհանեցի, որով անոնց գոր-  
ծերը դատապարտած կամ յայտնած  
րլամ: Ասոնց նկատմամբ բարի եւ գո-  
վեսափէք կը խօսէի եւ կրցածիս չափ  
անոնց կը մեղմացնէի կեանքն ու կենցա-  
զափարութիւնը:

Ո՛չ, որդեակս, այնպէս վարուէ, եթէ  
Ամենաբարին Աստուած քեզ զքիէ այս-

պիսի փորձանքը: Զքեզ չսիրող անձանց  
մասին եւս աղէկ խօսէ: Ամէն պարագա-  
ներու մէջ իսկ գովէ զանոնք: Ասիկա  
հրաշալի եւ գիւղազնական, շացուցիչ  
եւ սրտագրաւ գործ մը կատարելէն աւելի  
արդիւնաւոր է:

Բաց ասկէ, ով գիտէ, քու բարու-  
թեամբդ եւ հեղութեամբդ, քու քաղ-  
ցրութեամբդ ու համբերութեամբդ հնար  
չէ, որ անոնց արտին վրդովումը հանդար-  
տեցնես եւ յուղումները խաղաղեցնես,  
վերջապէս զանոնք բերես յանձնես Աս-  
տուծոյ:

Կը հասկնամս, որդեակս, ինչ խոնար-  
հութիւն, ինչ անձնուրացութիւն պէտք  
է քեզ: Ինքինքդ նրչափ մոռնալու ես:  
Ինձմէ ինդրէ այս առաքինութիւնները:

## Ի Գ. Օ Ր

Մարիամ Մայր իմ՝ օրինակս է:  
Աստուծածին եւ աղքատները:

Ով գթած եւ գորովլալից Տիրամայր,  
գուն աղքատները շատ սիրած ըլլալու  
ես: Աղքատաց սէրը նշան է ոչ միայն  
բարի արտի մը, այլ եւ այն սրտին, ուր

Ամենաբարին Աստուծած կը տիրէ բո-  
լորովին:

Ա. Աղքատ են նախ անոնք, որ ապրե-  
լու համար պէտք եղած բաները չու-  
նին: Հարկաւ արամագրութեանդ տակ  
գտնուածին չափով ունեցածէդ կու  
տայիր անոնց: Հարկաւ կը զգայիր, որ  
բարիք մը առ անձինն վայելելը լիովին  
վայելել չէ, հապա միայն կիսկատար:  
Քանիցս արիութեամբ մերժած ըլլալու  
ես արժանացած վարձատրութիւնդ կամ  
շնորհալիք լնծայ մը կամ աչքառու պար-  
գեւ մը, զոր կը շնորհէին բարեկամներդ  
ու ազգականներդ: Անշուշտ անոնցմէ  
խնդրած ըլլալու ես, որ մոռնան զքեզ,  
իսկ հոգան աղքատները:

Քանիցս տան մէջ ժողոված ըլլալու  
ես այն հազար ու մէկ փոքրիկ առար-  
կաները, չնչին սեպուած, ստրի տակ  
գացած բաներն, որ անոնցմով ալ բա-  
ժին հանես աղքատաց: Քանիցս աղեր-  
սանզը ինդրած ըլլալու ես որ աղքատաց  
բաշխուելու ողորմութիւնները տաս գուն  
անձամբ, քու ձեռքովիդ: Այս մարդա-  
սիրական գործերը կատարած ըլլալու ես  
որպիսի բարութեամբ, որպիսի համես-

տութեամբ։ Եւ նիւթեական ողորմութեան հետ աղքատաց տուած ըլլալու ևս նաեւ հօգեւոր ողորմութիւնն, որու մարդուս հօդին այնչափ կը փափաքի շատ անգամ։

Ո՞հ, Տիրամայր իմ Մարիամ, ես ալ կրնամ քեզ նման ընել։ Տուր ինձ աղքատասիրութեան ու ողորմածութեան շնորհքները։ Այսօր քու սիրոյդ համար անձէս բան մը պիտի կտրեմ եւ պիտի տամ աղքատաց։

### Ի Փ. Օ Ր

Մարիամ Մայր իմ օրինակս է։  
Ասուուածածին եւ տրտմեալու վշտացեալները։

Աղքատ են ոչ միայն անանք, որ երկաւոր բարիքներէ զրկուած են, այլ տրտմեալ ու վշտացեալներն եւու։

Բ. Միխիթարութեան եւ ուրախութեան պէտք ունեցող սրտերն եւա մէջմէկ աղքատներն են։ Եւ օրտով ու վշտացեալ աղքատները խիստ բազմաթիւ են եւ անհամար։

Տղոց մէջ կը գտնուին անսնցմ։ Ումանք իրենց ընտանիքէն հեռուն կը գտնուին։

Ուրիշները իրենց մայրը կորսնցուցած եւ որը մնացած են։ Միւսները ենթարկուած են երեսի վրայ ձգուելու, հետեւաբար գգուանքէ զուրկ մնալու։ Այս միխիթարութիւնները չունենալուն համար սրտերնին կը սրտմի։ Ո՞հ, Տիրամայր իմ Մարիամ, սրբերն ու երեսի վրայ թողուած անտէրները որչափ սիրած ըլլալու ես։

Սրտերնին վշտացեալ անձինք ծնողաց մէջ եւս կը գտնուին։ Ասոնք որչափ ցաւ ու նեղութիւն կը կրեն, երբ կը տեսնեն թէ իրենց զաւակները զիրենք երեսի վրայ կը թողուն։ Կարելի է, աւազ, անդորածութեան կամ ազերախտութեան ճամբան ճեռք կ'առնեն։ Եւ կամ մահը կու գոյ եւ իրենց տլաքը կը կորզէ։ Ո՞հ, Տիրամայր իմ Մարիամ, ինչ աղէկ գիտցած ըլլալու ես այս իւեղձ մայրերը, ծնողքները միխիթարելու ճամբան ու միջոց։

Զերմեռանդ անձանց մէջն ալ կը գտնուին աղքատներ։ Եւ նոյն ինքն Աստուած է, որ իր նախախնամութեան մէկ գաղտնիքով զանոնք կը զրկէ ամէն միխիթարութենէ եւ ուրախութենէ։

Ո՞վ Տիրամայր իմ Մարիամ, այսպէս սրտի տագնապի ու ցաւի մէջ գտնուող

Հոգիներուն ահ ու սարսափը, ցաւ ու  
կոկիծն որչափ ամոքած եւ մեղմացուցած  
ըլլալու ես: Հիմակ եւս եղիք միսիթարիչ  
վշտացերց: Եւ եթէ այսօր քու խորա-  
նիդ, քու արձանիդ, քու պատկերիդ  
առջեւ տղայ մը, մայր մը, հայր մը,  
տրտմեալ Հոգի մը դայ քեզ աղօթէ, դուն  
միսիթարէ զինքը: Ով Տիրամայր իմ Մա-  
րիամ, տղոց ցցուր քու դութզ ու դո-  
րովանքդ. ծնողաց եւ ցաւ ու խաչ ունե-  
ցող անձանց ցցուր քու խոցեալ սիրտ:  
Ամենուն լսելի ըրէ սա խօսքերը. “Քիչ  
մը ժամանակ եւս համբերէ եւ յետոյ  
երկինքն”:

## ԻԵ. ՕՐ

Մարիամ Մայր իմ օրինակս է:  
Աստուածածին եւ հանգստեան ժամ:

Մարիամ Աստուածամօր կեանքը պարզ,  
հասարակ կեանք մ'էր: Այս անձն, որ  
անոր սրտին խորերը մտած, հոգւոյն  
ներքինը թափանցած չէ, կամ անոր  
շըթունքներուն վրայի սովորական ժպի-  
տին եւ կամ ճակտին վրայ վայլող լաւ-  
զաղութեան պատմառը հասկցած չէ,

այն անձը Ամենասուրբ Կուսին նկատմամբ  
որոշ եւ ճշգրիտ գաղափար մը չպիտի  
ունենար: Պարզապէս սովորական կին մ'է  
պիտի ըսէր: Ճատէ շատ Աստուածածնայ  
համար ուրիշներէն աւելի հեղահոգի,  
քաջապիտ, անձնուէր կին մ'է պիտի  
ըսէր: Բայց պիտի զարմանար, եթէ իրեն  
իմացուէր թէ Ամենասուրբ Կոյսն Մա-  
րիամ է Աստուածամայր:

Մարիամ Աստուածածին կ'աշխատէր,  
կ'աղօթէր, կը հանգչէր ու կը հանգստա-  
նար: Եւ այս հանգստեան ժամերուն իսկ  
աղօթքով անցուցած ժամերուն չափ սի-  
րելի եւ հաճելի էր Աստուծոյ: Ամենա-  
սուրբ Կոյսն Մարիամ, իր մանկութեան  
ատեն, սիրով կը յօժարէր իր ընկերացն  
ուղածներուն եւ պահանջումներուն:  
Համբերութեամբ կը հանգուրժէր անոնց  
կամապաշտութեանը: Սիրով կը մանա-  
կցէր անոնց անմեղ զուարձութեանց ու  
կը գոհացնէր զանոնք: Երբեք ժառայու-  
թիւն մը չէր զանար կամ բարի խօսք  
մը չէր ինայեր: Մանաւանդ զբոսանաց  
կամ հանգստեան ժամ մը չէր անցներ  
առանց՝ գոնէ փոքրիկ թող ըլլայ՝ բարիք  
մընելու:

Ամենասուրբ կյան Մարիամ իր երիտասարդութեան ժամանակ միշտ կ'երեւար չափաւոր, զգուշաւոր, բարի, համեստ, շնորհալի, խոհեմ, մանաւանդ յնկերսիրութեան մասին փափուկ եւ աղնուածիրու:

Մարիամ Աստուածածին Յիսուսի Մայր եղած ատեն իր սիրելի մանուկէն երեք չէր զատուեր: Անոր քով կ'անցնէր իր հանգստեան ժամերը: Անոր քով կը գտնէր իր դժոնդակ աշխատութեանը թեթեւութիւն: Անոր քով եւ անոր հետ կը ժպտէր, օրինակ այն գորովալից եւ անձնազահ յարդալից սիրոյ, զոր կատարելապէս զգալու համար ըլլալու է քրիստոնեայ մօր մը քրիստոնեայ զաւակն եւ քրիստոնեայ զաւկի մը քրիստոնեայ մայրը:

Ո՞վ Տիրամայր իմ Մարիամ, երբէք մտքէս մի ելլեր իմ հանգստեան ժամերուս մէջ: Ամենուն հետ հեղահօդի, յօժարամիտ, անձնանուէր, զգուշաւոր, ընկերասէր ըլլամ: Բարիք ընկելու փափաքը միշտ թող տեսնուի ամէն գործոցս մէջ:

## Ի՞Զ. ՕՐ

Մարիամ Մայր զիս կանչող ծայնն է:

Այս Մայիս առայ առաջին օրը Աստուածամօրս Մարիամն խոստացայ, որ ամէն օր հաւատարմութեամբ գամ, մեծարեմ, յարգեմ զինքը: Իսկ երկրորդ օրը խօսք տուի հլու եւ հնազանդ ըլլալու: Եւ Աստուածամայրս խօսեցաւ սրտիս: Իմացուց ինձ իր սէրը, իր կարողութիւնը, իր դժութիւնը: Աստուածամայրս իմ իմացականութեանս խօսեցաւ իր առաքինութեանց մէջն իմ կարողութենէս վեր չեղածներուն վրայ. խօսեցաւ միայն իմ կատարելիք առաքինութեանց վրայ: Ես ալ 'ի փոխարէն խոստացայ հաւատարմաբար անոնց օրինակին հետեւիլ: Ահա այսօր եւս կը լսեմ անոր ծայնն, որ զիս կը կանչէ եւ կ'ըսէ.

Ա. Որդեակս, կը սիրեմ սիրոյ եւ վստահութեան զգացումներդ, կը սիրեմ քու յարգանկըդ ու մեծարանքդ: Կը սիրեմ մանաւանդ իմ առաքինութեանցս հետեւելու համար ըրած ջանքերդ: Բայց ասոնցմէ զատ ունիմ քեզմէ ուզելու բաներ: Կ'ուզէս իրապէս իմ ըլլալ. Կ'ուզէս

ինքզինքդ ինձ տալ ամբողջովին, որպէս  
զի տանիմ գքեղ տամ Յիսուսի Քրիս-  
տոսի: Այնպէս կիսկատարը չի բաւեր: Ինձ  
տուր ամբողջովին քու հոգիդ, քու մար-  
մինդ: Ինձ տուր քու մարմինդ իր ան-  
դամներովն, իր գդացումներովը միատեղ:  
Ինձ թուր քու մարմինդ զօրացնելու կամ  
տկարացնելու հոգը: Ինձ տուր քու հո-  
գիդ իր կարողութիւններովը: Ինձ յանձնէ  
նաեւ քու առաքինութիւններդ եւ բարե-  
գործութիւններդ, քու արժանիքներդ  
եւ երկնաւոր արդիւնքներդ: Անտարակոյս  
անոնց հաղորդուիլ կարելի չեղած մասը  
քեզ կը վերապահուի: Բայց մնացածն  
ինձ յանձնէ, որ անոնցմէ այլոց հաղոր-  
դուելիք մասը տրամադրեմ Աստուծոյ  
Մեծագոյն փառաց:

Իմ հաւատարիմ զաւակներէս մին,  
Սուրբն Օգոստինս ինձ տուած է ։ Աս-  
տուծոյ կենդանի կաղապարն անունը:  
Եւ իրաւամբ ըսած է, քանի որ Մարդա-  
ցեալն Աստուած կազմուած է յիս: Մար-  
դիկ եւս կրնան կազմուիլ այդ եղանակաւ:  
Աստուած ինձմով մարդ եղաւ: Մարդիկ  
եւս ինձմով կրնան ըլլալ Աստուծոյ  
որդիք:

Որդեակս, մտածէ այս գաղափարիս  
վրայ եւ այս օրէ սկսեալ մտածէ սուրբե-  
րուն սա խօսքին վրայ: ։ Ինչպէս որ Աս-  
տուած երկինքն երկիր գալու համար  
անցաւ Մարիամ Աստուածածինէն, նմա-  
նապէս հոգին չի կրնար երկրէս երկինք  
երթալ, եթէ ինքզինքն ամբողջովին չտայ  
Աստուածամօր, եթէ չանցնի Մարիամ  
Մօրմէ: ։

## Ի Է. Օ Պ

Մարիամ Մայր զիս կանչող ծայնն է:

Ինչպէս որ երեկ քեզմէ խնդրեցի, որ  
ինձ յանձնես քու մարմինդ ու հոգիդ,  
թոյլ տուր, որդեակս, որ այսօր ալ քեզ  
ճանչցնեմ:

Բ. Ինքզինքնին ինձ յանձնողներուն  
պարզեւած շնորհ. քններս:

1. Զանոնը կը զըրացնեմ: Ինձ կը  
պատկանին անոնց ամեն ունեցածներն ու  
ամէն բրածները: Հոգ կը տանիմ, որ  
ամէնքը բարի բլան: Գիտեն, որ ես քո-  
վերնին եմ: Կը յաւսան, կը սպասեն, որ  
չբաժնուիմ իրենցմէ: Վատահ են, որ  
իրենց օդութեան կը հասնիմ մասնաւ-

ւորապէս իրենց աղօթքի, աշխատութեան, հանդստեան ատեն: Անոնց քովն եմ, որ միշտ առաքինութիւն մը գործել տամ անոնց, մէյ մը խոնարհութիւն, մէյ մը համբերութիւն, այս անդամ ընկերութիւն, ուրիշ անդամ անձնազոհութիւն: Անոնց հետն եմ, երբ չարչարանք կը կրեն: Գտնուած են մարդիկ որ սովորութեան զօրութեամբ եւ շնորհաց ազդեցութեամբ միշտ իրենց քով ներկայ կը տեսնեն զիս:

2. Զանոնք կը ներկայացնեմ Յիսուսին, որ հիմակ իմ ձեռքէս կ'ընդունի անոնց բոլոր բարեգործութիւններն ու բոլոր փափաքներն. իսկ անոնց մահուանէ վերջ՝ զանոնք դարձեալ իմ ձեռքէս պիտի ընդունի եւ տեղաւորցնէ արքայութեան մէջ: Միթէ Յիսուսի Մայրը չ'էմ: Եւ միթէ Յիսուս կրնայ մերժել իր Մօրը ծառայութիւն մատուցանողը, զայն սիրողը:

3. Անոնց կու տամ խաղաղութիւն եւ համբերութիւն, երբ ցաւ քաշեն: Միթէ կրնամ զանոնք չպաշտպաննէ: Հարկաւ փորձութիւններ պիտի ունենան, բայց զիս իրենց օգնութեանը կանչելու սովո-

րութիւնն ունենալուն համար, իրենց օգնութեան պիտի հասնիմ միշտ: Եթէ զիս կանչելը երբեմն մաքերնին չիյնայ կամ մոռնան, իրենց անկումները շատ ծանր պիտի չըլլան, մեծամեծ մեղքեր պիտի չգործեն: Պիտի ունենան պակասութիւններ, պիտի գործեն յանցանքներ, նիրելի մեղքեր: Բայց շուտով պիտի շոկեն իրենց յանցանքներն: Խնդզինքն ինձ տուողը կրնայ նիւթապէս թափառիլ, կրնայ սխալիլ, բայց իսկյն պիտի ճանչնայ իր սխալն ու յանցանքը: Յամառութիւն չպիտի ընէ, չպիտի պնդէ: Վարքը պիտի փոխէ: Պիտի գառնայ առ Աստաւած: Պիտի նետուի Աստուծոյ գիրկը:

Այս նուիրատուութեան հիմն են հնազանդութիւնն եւ խոնարհութիւնն: Դուն ինքզինքդ ինձ տալու փափաքը չես զգար: Մանաւանդ որ ես զքեզ ուղղակի պիտի տանիմ Միածին Որդւոյս, Յիսուս փրկչէ Ամենասուրբ Սիրտը պիտի մոցնեմ: Հոն միայն հնար է գտնել խաղաղութիւն, բերկութիւն, երանութիւն:

## Ի Բ. Օ Բ

Մարիամ Մայր զիս կանչող եւ ինօ առաջ-  
նորդող ծայն է:

Որդեակս, կ'ուզե՞ս պյաօր ընդհանուր  
գաղափար մ'ունենալ քեզմէ խնդրած  
նուիրատուութեանս մասին.

Գ. Ինքզինքը Մարիամ Աստուածամօր  
տալ ըսելն որիշ բան չէ, եթէ ոչ

1. Եր բոլոր գործերը կատարել Մա-  
րիամ Աստուածամօր հետ, ինչպէս որ  
ինքը պիտի ընկը, եթէ գտնուէր մեր  
գտնուած պարագաներուն մէջ, եթէ  
ունենար մեր ունեցած պարտականու-  
թիւնները:

2. Եր ամեն գործերը կատարել ընդ  
հովանաւորութեամբ Տիրամօր կուրին:  
Ատենք մեր շատ պղտիկ եղած ժամանակ,  
մեր մօր ակնարկը մեր վրայ եղածին միշտ  
նմանը կրնանք համարիլ: Ուրեմն անոր  
մայրական ակնարկին աղդեցութեան ներ-  
քեւ գործենք միշտ:

3. Մեր բոլոր գործերը Աստուածամօր  
միջոցաւ կատարենք: Այսինքն լմցնելուս  
պէս՝ մեր ամէն գործերը յանձնենք անոր  
չենքը, որպէս զի նախ սուրբ ընէ զանոնք.

Եւ Յիսուսի Քրիստոսի ներկայացնելէ յե-  
տոյ, իր ուզածին պէս տրամադրէ:

Բարեպաշտ Թովմաս Գեմբացին այս  
վարդապետութիւնը բացատրեց, ընդ-  
լայնեց հետեւալ անուշիկ խօսքերով:

Ուզելով, յետ Յիսուսիս,  
Պարտիլ համայն Մարեմայ:

Եւ տալ փըրկչիս սիրոս հօգիս,  
Նուիրեմ զանձն իմ Մարեմայ:

Առաջնորդն իմ եւ վըկայն  
Գրանեմ յանձին Մարեմայ:

Ուզելով մըտածել մրոյն,  
Լինել հաճոյ Մարեմայ,

Արշալոյին լիաբերան  
Անունն երգեմ Մարեմայ:

Ընտրըմ ինձ զերթ վաշան  
Սիրտն Անարատ Մարեմայ:

Խընդութիւնս եւ բերկութիւնքս  
Թողում համակ Մարեմայ:

Գետոց պէս աչաց արցունքս  
Ցուցնեմ ես սոսկ Մարեմայ:

Երբ գան ինձ փորձանք, վրտանդ,  
Փախչիմ 'ի գիրին Մարեմայ:

Ունիմ տուայտանք, տառապանք,  
Աչերս յեռում Մարեմայ:

Իմ սիրոյս երգն ու յանկերգն

Են փառքերն իսկ Մարեմայ:  
 Զես զըգուեն թողմիայն սուրբ ձեռքն  
 Ըլնորհաբուղն Մարեմայ:  
 Գիշերն իսկ սիրտս հալ՝ 'ի սէր  
 Աստուածամօրս Մարեմայ  
 Չնընջեմ ես ուրեմն 'ի Տէր,  
 Ի մէջ բազկացն Մարեմայ:  
 Ի ժաման իմայ մահուան  
 Մտանեմ 'ի Սիրտն Մարեմայ:  
 Թող կարդան շիրմիս վըրան  
 Ի մեծ փառքս Մարեմայ.  
 "Մեռանիլ, ո՞չ, զե՞ քաղզը է  
 Ի մէջ բազկացն Մարեմայ:  
 Ո՛վ անցորդ, մեռիր, ապրէ,  
 Տուր սիրտը միշտ Մարեմայ:

## Ի ԹԱ. Օ Բ

Մարիամ Մայր զիս կանչող եւ ինձ առաջ-  
 նորդող ծայնն է:

Կ'ուզե՞ս, որդեակս, որ հիմա օրուան  
 բոլոր ժամերդ հետք աչքէ անցնելով  
 հոգւոյդ մէջ ունենալուդ փափաքած  
 զգացումներս իմացնեմ քեզ:

Ա. Այսօր կրօնական պարտուց վըայ  
 խօսինք:

1. Առաւտոտուն արթնցածիդ պէս եւ  
 իրիկունը քնանալէդ առաջ երեսդ խա-  
 չակնքէ եւ համբուրէ միտուլ զոր վիզդ կը  
 կրես: Անոր վըայ կը դանուի իմ պատկերս,  
 երկնաւոր Մօրդ պատկերը: Համբուրէ  
 նաեւ կապը, սրով միտուլ վիզդ անցուցած  
 ես, եւ երջանկութեամբ ու գոյնունակու-  
 թեամբ մտածէ որ զքեզ իմ ծառայու-  
 թեանս կապող հօգեւոր շղթայիս նշանն  
 է: Ըսէ սիրով եւ գորովանօք: "Ո՛վ Մայր  
 իմ Մարիամ, քեզ կը պատկանիմ. պահէ  
 զիս, պաշտպանէ զիս իբր քու բարեքդ եւ  
 քու սեպհականութիւնդ:

2. Մտածէ որ աղօթքի ատեն, հոդ,  
 քովիդ եմ եւ մարդարտի հատիկներ  
 ձգածի պէս քու շրթունքներէդ Շափէ  
 եւ ձեռքիս մէջ դիր քու խօսքերդ: Հայր  
 մեր... ին, Հաւատամք... ին, Ներդոր-  
 ծութիւն... ներուն եւ ուրիշ աղօթքնե-  
 րուն իւրաքանչիւր բառերը մէյ մէկ մար-  
 դարիտ, չե՞ն միթէ: Աղօթքիդ ատեն  
 պարզապէս ինձ բսէ. Բարեգութ Ցիրա-  
 մայրս, յիշողութեանս մէջ եղիր եւ հոն  
 պահէ միայն Յիսուսի յիշատակը: Եղիր  
 իմացականութեանս, խելքիս մաքիս մէջ,  
 որպէս զի զբաղիմ միայն Յիսուսի խօսքե-

րով ու գործերով եւ հետամնւտ ըլլամ  
միայն անոնց: Եզեր իմ կամքիս մէջ, որ-  
պէս զի Յիսուսի ուզածէն զատ ուրիշ  
բանի չփափաքիր: Յիսուսին ըսելիքներդ,  
խոստանալ ուզելիքներդ իմացուր ինձ:  
Տիրոջ դարձիր եւ ինձ հետ “Տէր, աշա-  
ւասիկ ես պատրաստ եմ, ուզածդ հրա-  
մայէ իմ հոգւոյս, ըսելով լմիցուր  
աղօթքդ:

3. Պատարագի ատեն եւ որբութիւն  
առած ժամանակի ինքոնքդ միացուր  
ինձ: Եւ Սուրբ պատարագին ներկայ զբա-  
նուելով՝ Աստուածորդուոյս Յիսուսի չար-  
չարանաց յիշատակը միտքս բերած ատե-  
նուանս եւ սիրտս լեցնող սիրոյ եւ յար-  
գանաց զգացումներովս լեցուր սիրտդ:

Հաղորդութենէ առաջ ըսէ ինձ. Ո՛վ  
Տիրամայր իմ. քու ձեռքէտ կ'ուզեմ ըն-  
դունիլ Յիսուսը: Դուն ինձ տուր զայն:  
Եւ յստակօրէն ըսէ ներդործութիւնները,  
որբութենէ առաջ ըսուելիք աղօթքները:

Ամենասուրբ Հաղորդութենէ յետոց  
ըսէ Յիսուսին: Ո՛վ քաղցրիկ Յիսուս իմ,  
քեզ կ'ընծայեմ քու Տիրամօրդ մատուցած  
չնորհակալութեան աղօթքներն: Եւ այն-  
պէս մը զգա, որ ես եկած եւ քու սրտիդ

մէջ Յիսուսի Քրիստոսի երկրպագութիւն  
կ'ընեմ, չնորհակալութիւն կը մատուցա-  
նեմ, սէրս կը յայտնեմ: Դարձիր, ըսէ  
ինձ. Տիրամայր իմ, Յիսուսը պահէ սրտիս  
մէջ, զայն ապրեցուր հօն, թագաւորե-  
ցուր հօն:

## I. Օ Բ

Մարիամ Մայր զիս կանչող եւ ինձ առաջ-  
նորդող ձայննէ:

Հոգեւոր կենաց պարտուց ուսումնասի-  
րութենէն յետոյ տեսնենք պյօր

Բ. Կենաց սովորական պարտականու-  
թիւնները:

1. Բոլոր արտաքին գործոց մէջ, ձեռ-  
քով կամ մաքով գործած ու զբաղած  
ատենդ, կերակուրի ժամանակ, պարտա-  
ւորեալ կամ պարզապէս հանգստանալու  
համար ըրած պյցելութեանցդ. միջոցին  
երեք մաքէդ մի հաներ սա մտածում.  
Բարեգութ Տիրամայրս իմ վրաս կը հսկէ,  
իմ հետո կը գործէ, իմ հետո կը խօսի,  
իմ հետո ցաւ կը կրէ: Աերջապէս ամէն  
գործոցս մէջ իմ հետո է եւ կ'օգնէ ինձ:

2. Պակասութենէ կամ յանցանքէ մը  
յետոց բաէ ինձ. Բարեսիրտ Տիրամայր իմ,  
տկար էի, մոռացկոտ էի, չար էի: Կը գառո-  
նամ քեզ կու գամ: Ինձ համար խնդրէ  
ներում: Ըրած բարեգործութիւններս  
Աստուծոյ բնծայէ մեղացս թողութեան  
համար: Երբ խոստովանելուս ժամը հաս-  
նի, իմ պակասութեանցս վրայ անկեղծ  
զղում մը տուր ինձ:

3. Միշտ եւ հանապազ եղիր հան-  
դարտ, խաղաղ, քաղցրաբարոյ եւ հեղա-  
հոդի: Ուրախութեան ժամանակ շնոր-  
հակալ եղիր Մարիամ Աստուածածինէն:  
Չարբաստիկ եւ դժուարին դիպուածոց  
մէջ աւելի մօտեցիր Աստուածամօրդ:  
Ցաւոց, նեղութեանց մէջ մեղմօրէն ըսէ  
Աստուածամօրդ Սիրելի անունը՝ Մա-  
րիամ: Ըսէ եւ նորէն ըսէ. Մարիամ, իմ  
Աստուածամօրյու է. ես անոր կը պատկա-  
նիմ: Մարիամ, իմ թագուհիս է. ես  
անոր կը հնազանդիմ: Մարիամ, իմ վե-  
հապետս է, բայցարձակ Տիրուհիս է. ես  
անոր կը ծառայեմ: Մարիամ, իմ վար-  
դագետս է. ես անոր ըսածին կը հե-  
տեիմ: Մարիամ, իմ օրինակս է, ես  
զայն կուսումնասիրեմ: Մարիամ, իմ

նեցուկս է. ես անոր կը կոթնիմ: Մա-  
րիամ, իմ զօրութիւնս է, ես անով կը  
պատերազմիմ: Մարիամ, իմ ապաւէնս  
է. ես անկէ չեմ բաժնուիր: Մարիամ, իմ  
ապաստանս է. ես կը հանգչիմ 'ի նա:

### Ա. Օ Ր

Ամենասուրբ Կոյսն Մարիամ իմ Տիրամայրս է.  
Ես ինքը ինքս կու տամ անոր:  
Նուիրումն առ Ամենասուրբ Կոյսն Մարիամ  
Աստուածածին:

Ո՛վ Մարիամ, Յիսուսի սքանչելի  
Մայրը եւ իմ Սիրելի Մայրս. աշխարհիս  
հզօր եւ կարու Տիրուհին եւ իմ Սիրելի  
Տիրուհիս. Ահաւասիկ ինք զինքս քեզ  
նուիրելու համար ես կու գամ որդիսկան  
ուրախութեամբ քու ոտքդ կ'իյնամ:  
Այս, Մայր իմ Մարիամ, քեզ կը յանձ-  
նեմ իմ ամբողջ էութիւնս, ինչ որ ունիմ  
եւ ինչ որ բնական ու գերբնական կարգին  
մէջ կրնամ ստանալ:

Ո՛վ Մարիամ Մայր, իմ հոգւոյս  
կեանքը, ես ինք զինքս այնչափ կատա-  
րելապէս քու ձեռքդ կը յանձնեմ, որ  
ամէնւ քեզ տալէս վերը, ոչ միայն քով՝

ինձ համար բան մը չեմ պահեր, հապա  
ասկէ վերջը երջէք, ոչ ներկայիս եւ ոչ  
յաւիտենականութեան մէջ եւ ոչ մէկ  
բան կ'ուզեմ ունենալ: Իմ հօգիս իր  
կարողութիւններովը, իր սիրովը, իր  
յոյսովը. իմ մարմինս իր զգայարանք-  
ներովն եւ իր ապականելի ու մաշկանացու  
կեանքրովը, վերջապէս իմ ամբողջ էռու-  
թիւնս հիմակուրնէ քեզ կը յանձնեմ,  
առանց ինձ բան մը վերապահելու եւ  
դառնալ ու տուածներս ետ առնելու  
յոյսն անգամ ունենալու: Քու մայրական  
վարչութեանդ, քու բարեգութ առաջ-  
նորդութեանդ եւ քու սիրազել նախախ-  
նամութեանդ կը թողում ամէնը: Մա-  
նաւանդ եւ մասնաւորապէս այսօր քեզ  
կը նուիրեմ իմ բոլոր մտածումներս, իմ  
բոլոր զգացումներս, իմ բոլոր կրօնական,  
մարդասիրական, Աստուածափրական եւ  
ապաշխարողական գործերս: Ես քուկդ  
եմ, որպէս զի աւելի կատարեալ կերպով  
ըլլամ Յիսուս Փրկչիս:

Բայց, ով Մայր իմ Ամենաբարի, այս  
նուիրատուութիւնս որչափ ալ բացարձակ  
ըլլայ, իմ կամենալս եւ փափաքիլս չեն  
բաւեր, որտիս եւ իմ բուռն սիրոյս պէտ-

քերը չեն կրնար յագեցնել: Ասոր համար  
կ'աղաչեմ. Ով իմ Տիրուհիս, գուն, որ  
անհուն բարի ես, իմ ընել չկրցածներս  
դուն ըրէ: Համեմ զիս քեզ հետ միացնել:  
Ամենէն սերս ու մաերիմ, ամենէն բա-  
ցարձակ ու անփակի կերպով. իմ չգիտ-  
ցած՝ իսկ քու լու գիտցած կերպովդ զիս  
քու բարիքդ եւ սեպհականդ ըրէ: Այն-  
պէս որ ես քուկդ ըլլամ եւ միշտ քեզ  
ծառայեմ. ոչ միայն սոսկ իմ գործերովս,  
այլ եւ զիս հաստատել ուզած մասնաւոր  
վեճակիդ եւ նոր կացութեանդ մէջ:

Ո՞վ, Ամենասուրբ Սիրտ Յիսուսի, ողոր-  
մեա մեզ:

Ո՞վ, Անարատ Յղացեալ Սիրտ Մարիա-  
մու, աղօթեա վասն մեր:

## ՄԵՂԹ-ԱՆՔ ԵԹ Ս. ԵՍՏՈՒԵԺԱԾԻՆՆ

Մայր սուրբ պանչելի լուսոյն, որ զԱստուածն յաւեխենից յորովայնի քում կրեցեր եւ ցնծութիւն աշխարհի ծնար զԲանն Աստուած, Աղաչեմք։ Մայր սուրբ բարեխօսեաւ։

Աղաչեաւ վասն մեր զառ ՚ի քէն զմար մնացեալն Աստուած, որ խոնարհնեցաւ ՚ի հայրական ծոցոյ. էառ մարմին ըստ մարդկային բնութեանս, առնել խալաղութիւն յերկին եւ յերկրի. Աղաչեմք. Մայր ...

Աղաչեաւ. Ներել մեզ անտես առնել զյանցանս մեր. եւ տալ օգնականութիւն ընդդիմակաց լինել հակառակամարտիցն ՚ի պատերազմի. Աղաչեմք. Մայր ...

Աղաչեաւ. զի լուեսցեն պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց. տնկեսցի սէր եւ արդարութիւն ՚ի յերկրի. Աղաչեմք. Մայր ...

Աղաչեաւ. ամեցուցանել յերկրի մերում զբաղցր բիսումն աղբերաց. զառատ պտղաբերութիւն բուսոց եւ տնկոց. առ ՚ի զուարձալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց. Աղաչեմք. Մայր ...

## ՄԵՂԹ-ԱՆՔ ԵԹ Ս. ԵՍՏՈՒԵԺԱԾԻՆՆ

Մրանչելի լուսոյն սուրբ Մայրո, որ յաւետնից Աստուածը որովայնիդ մէջ կրեցիր եւ Բանն Աստուածը, աշխարհիս ցնծութիւնը, ծնար. Կ'աղաչենք. Մայր սուրբ բարեխօսեաւ։

Մեզ համար աղաչէ բեզմէ մարմնացեալ Աստուածոյ, որ հայրական ծոցէն խնարհեցաւ, մեր մարդկային քնութեան համեմատ մարմին առաւ, երկինքի մէջ եւ երկրի վրայ իսաղաղութիւն հաստատելու համար. Կ'աղաչենք. Մայր ...

Մեզ համար. որ ներէ մեզ եւ մեր յանցանցները անտես ընէ, եւ պատերազմի ատեն հակառակորդաց դէմ դնելու օգնութիւն տայ. Կ'աղաչենք. Մայր ...

Մեզ համար. որ պատերազմները լոեն, թշնամիաց յարձակումները դարձին. երկրի վրայ հաստատուի սէր եւ արդարութիւն. Կ'աղաչենք. Մայր ...

Մեզ համար. որ մեր երկրի վրայ ածեցնէ անդիթներու քաղցր բնիստմ, սոյսերուն եւ տունկերուն առատ պտղաբերութիւնը, որպէս զի մեր ամէն հարկաւոր պէտքերը զուարձալի ըլլան. Կ'աղաչենք. Մայր ...

Աղաչեա. զի միաբանեսցէ զեկեղեցի  
իւր սուրբ. շինեալ 'ի վերայ հիման առա-  
քելոց եւ մարգարեից. պահել անարատ  
մինչեւ յօր երեւելոյ դալստեան իւրոյ.  
Աղաչեմք. Մայր...

Աղաչեա վասն մեր Սրբուհի զՄիածին  
քո զՈրդի. եւ վասն հոգւոցն հանգուցե-  
լոց՝ ընդունել յարքայոթիւն երջնից,  
եւ տալ մասն եւ բաժին ընդ սուրբս  
ամենայն. Աղաչեմք. Մայր...

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ եւ  
զդործս բարեաց պարգեւել մեղ ինդրեմք:  
Տնր մեզ, Տէր, Աստուած մեր:

Զանձենս մեր եւ զմիմեանս Տեառն  
Աստուծոյ յանձն արասցուք. Քեզ,  
Տեառնդ, յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր,  
ըստ մեծի ողորմութեան քում, ասասցուք  
ամենեքեան միաբանութեամբ: Տէր, ողոր-  
մեա, Տէր ողորմեա, Մայր սուրբ բարե-  
խօսեա առ Տէր վասն մեր:

Մեզ համար, որպէս զի առաքելոց եւ  
մարգարէից հիման վրայ շինուած իր սուրբ  
եկեղեցին միաբանէ, եւ մինչեւ իր տեսանելի  
գալստեան օրը անարատ պահէ. Կ'աղաչենք.  
Մայր...

Ո՛վ Սրբուհի Մարիամ, քու Միածին Որդ-  
ւոյ աղաչ մեզ եւ նսչեցեալ հոգւոց համար,  
որ իր երկնից արքայութեան մէջ ընդունի եւ  
ամէն սրբոց նատ մասն ու բաժին տայ. Կ'ա-  
ղաչենք. Մայր...

Եւ եւս առաւել կը ինսդրենք, որ մեզ պար-  
գեւէ առաջ սէր եւ բարեզրութիւններ:  
Մեր Տէր Աստուածը չնորհէ մեզ:

Մնր անծերը եւ մէկզմէկ յանձնենք Տէր  
Աստուծոյ: Տէր Աստուած քեզ կը յանձ-  
նուինք:

Մեր Տէր Աստուածը ողորմէ մեզ քու մեծ  
ողորմութեանդ համեմատ: Ամէնքնիս միա-  
բանութեամբ ըսնենք. Տէր, ողորմէ, Տէր,  
ողորմէ, Մայր սուրբ մեզ համար Տիրոջ բա-  
րեխօս եղիք:

**ՊԱՂԵՑ ԸՆՆՓ**

առ Ամենատուրբ Կոյսն Մարիամ:

**Տէր ողորմեաւ:**

Քրիստոս ողորմեաւ:

**Տէր ողորմեաւ:**

Քրիստոս լուր մեզ:

Քրիստոս անսաւ մեզ:

Հայր երկնաւոր Աստուած, ողորմեաւ մեզ:

Որդի փրկիչ աշխարհի Աստուած, ողոր:

Հոգիդ սուրբ Աստուած, ողոր:

Սուրբ Երրորդութիւն մի Աստուած, ողոր:

Սրբուհի Մարիամ, աղօթեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին, աղօ:

Սուրբ Կոյս Կուսանաց, աղօ:

**Մայր Քրիստոսի,** աղօ:

Մայր աստուածային շնորհաց, աղօ:

Մայր մաքուր, աղօ:

Մայր սուրբ, աղօ:

Մայր անարատ, աղօ:

Մայր անբիծ, աղօ:

Մայր սիրելի, աղօ:

**Մայր սքանչելի.**

Մայր բարի խորհրդոյ,

Մայր արարչին,

Մայր փրկչին,

Կոյս իմաստուն,

Կոյս յարդոյ,

Կոյս քարոզելի,

Կոյս հզօր,

Կոյս գթած,

Կոյս հաւատարիմ,

Հոյելի արդարութեան,

Աթոռ իմաստութեան,

Պատճառ մերը խնդութեան,

Անօթ հոգեւորական,

Անօթ պատուելի,

Անօթ ընտիր աստուածպաշտութեան,

Վարդ խորհրդական,

Աշտարակ գաւթեան,

Աշտարակ փլոսսկրեայ,

Տուն սսկեղէն,

Տապանակ ուխտի,

Դուռն երկնից,

Աստղ առաւօտեան,

Առողջութիւն հիւանդաց,

Ապաստան մեղաւորաց,

աղօ:

Միիթարիչ վշտացելոց.  
 Օդնական քրիստոնէից.  
 Թագուհի հրեշտակաց.  
 Թագուհի նահապետաց.  
 Թագուհի մարդարէից.  
 Թագուհի առաքելոց.  
 Թագուհի մարտիրոսաց.  
 Թագուհի խստովանողաց.  
 Թագուհի կուսանաց.  
 Թագուհի ամենայն սրբոց.  
 Թագուհի յղացեալ առանց արա-  
     տոյ մեղաց.  
 Թագուհի ամենասուրբ վարդարանի. աղօ:  
 Թագուհի խաղաղութեան.  
 Գառն Աստուծոյ որ բառնաս զմեղս աշ-  
     խարհի. խնայեա 'ի մեզ Տէր.  
 Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշ-  
     խարհի. անսա՛ մեզ Տէր.  
 Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշ-  
     խարհի. ողօրմեա՛ մեզ.  
 Յիսուս լուր մեզ.  
 Քրիստոս անսա՛ մեզ:  
  
 Աղաշեա՛ վասն մեր Սուրբ Աստուածածին.  
 Զի արժանի լիցուք խոստմանցն քրիս-  
     տոսի:

### Ա Դ Օ Թ Ք

Աստուած անձառելի ողորմութեան,  
 որ ոչ միայն մարդ, այլ եւ Որդի մարդոյ  
 լինել հաճեցար, եւ ծնանելով 'ի Կուսէ  
 զմայր 'ի յերկրի ստացար, որ զԱստուած  
 ունէիր Հայր 'ի յերկինս. տուր մեզ աղա-  
 չեմք զիշտակ նորա յօժարութեամբ  
 կատարել. զմոյրութիւն նորա գերագոյն  
 յարգանօք պատուել, գերազանցագոյն  
 վաեմութեան նորա զմեզ խոնարհու-  
 թեամբ հպատակել, որ զքեզ Հոգւով  
 Սրբով յղացաւ, զքեզ կուսութեամբ  
 ծնաւ եւ զքեզ յերկրի ինքեան հնազանդ  
 կալաւ զթէրդ մեր Յիսուս Քրիստոս, որ  
 կհնդանի ես եւ թագաւորես ընդ Հօր  
 եւ բնդ Սրբոյ Հոգւոյն 'ի յաւիտեանս.  
 Ամէն:

Հրեշտակ Տեսուն։  
 Հրեշտակ Տեսուն աւետեաց Կուսին Մարիամու,  
 Եւ յդացաւ ՚ի Հոգւոյն Սրբոյ։ Ողջոյն  
 քեզ...  
 Ահաւասիկ կամ աղախին Տեսուն,  
 Եղիցի ինձ ըստ բանի քում։ Ողջոյն քեզ...  
 Եւ Բանն մարմին եղեւ,  
 Եւ բնակեաց ՚ի մեզ։ Ողջոյն քեզ...  
 Աղաչեա վասն մեր Սուրբ Կոյս Աստուածածին,  
 Զե արժանի լիցուք խոստանցն Քրիստոսի.  
 Ա Պ.Օ Թ.Ք

Զշնորհս քո աղաչեմք, Տէր, հեղ ՚ի  
 միտս մեր, զի որ աւետեօք հրեշտակին  
 ծանեաք զմարդեղութիւն Քրիստոսի Որդւոյ,  
 Հարշարանօք նորին եւ խաչիւ  
 ժամանեցուք ՚ի փառս յարութեան, Տերամք մերով Յիսուսի Քրիստոսիւ. Ամէն։

Անկանիմք առաջի քո Աստուածածին  
 եւ աղաչեմք զԱնարատ զկոյսդ. բարեխոսեա վասն անձանց մերոց, եւ աղաչեա զՄիածին Որդիդ, փրկել զմեզ ՚ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց։

Ընդ հովանեաւ պաշտպանութեան քո  
 ապաւինիմք, Սուրբ Աստուածածին, զաղաշանս մեր մի անտես առներ ՚ի կարիս  
 մեր, այլ փրկեա զմեզ յամենայն վտանգից,  
 փառաւորեալ եւ օրհնեալ միշտ Կոյս։  
 Ամէն։

Ողջ լեռ, թագուհի, Մայր ողորմութեան, կեսանք, քաղըրութիւն եւ յցու  
 մեր, ողջ լեռ Առ քեզ գոչեմք սքսորեալ  
 որդիքս Եւայի, առ քեզ հառաչեմք հեծելով եւ ողբարով յայսմ արտասուաց  
 վայրի։ Արդ, ով բարեխօս մեր, դարձն  
 առ մեզ զաջու ողորմութեան քոյ, եւ  
 զթիսու զօրհնեալ պտուղն որովայնի քոյ  
 յետ այսր աքսորանաց ցցոյ մեզ, ով գթած, ով բարեգութ, ով քաղըր Կոյս  
 Մարիամ։ Աղաչեա վասն մեր սուրբ Աստուածածին. զի արժանի լիցուք խոստանցն Քրիստոսի։

Ով թագուհի եւ Մայր իմ, յիշէ որ  
 ես քեզ կը պատկանիմ. պահէ զիս,  
 պաշտպանէ զիս իբր քու բարեքդ եւ քու  
 սեպհականդ. Ամէն։

Յիշէ, ով ամենազթած կոյս Մարիամ, թէ լոււած բան մը չէ, որ պաշտպանութիւնդ խնդրող մէկը երեսի վրայ թուղուած ըլլայ: Այսպիսի վտահութեամբ մը խրախուսուած կը գիմեմ, Ով կոյս կուսանաց, ով Մայր իմ, քեզ կու գամեեւ քու առջեւդ հեծեծող մեղաւորս 'ի քեզ կ'ապահնիմ: Ո՛հ, բանն Աստուծոյ, Յիշուսիս Մայրը, մի մերժեր աղօթքներս, այլ հաճութեամբ ունկն գիր անոնց եւ ընդունէ զանոնք. Ամէն:

Ո՛վ թագուհի եւ Մայր իմ, զիս բոլորս քեզ կը նուիրեմ եւ 'ի նշան իմ ծառ ուայութեանս, քեզ կ'ընծայեմ այսօր իմ աչքերս, իմ ականչներս, իմ բերանս, իմ սիրոս եւ բոլոր իմ անձն: Եւ ըստ որում քեզ կը պատկանիմ, Ո՛վ Մայր իմ ամենաբարի, պահէ զիս, պաշտպանէ զիս իբր քու բարիքդ եւ քու սեպհականդ, Ամէն:

### ՍԼԱՔԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ Անարատ Յղացեալ Սիրտ Մարիամու. աղօթեա վասն մեր:

Ո՛վ Անարատ Յղացեալ Մարիամ, մեզ՝ քու օգնութիւնդ հայցողներուս համար բարեխօսէ:

100 օրուան ներող. Օրը մէկ անգամ:

Քաղցրիկ Սիրտ Մարիամու, գուն իմ փրկութիւնս եղիք:

300 օրուան ներող. Ամէն մէկ անգամին. Իիակ. Ամիսը մէկ անգամ:

### Յիսուս Մարիամ:

300 օրուան ներող. Ամէն անգամ որ մէկը այս իղծն ու հառաշանքը բնիքանացի կամ սրտէն կ'ըսէ:

Յիսուս, Մարիամ, Յովսեփ, Զեղ կը յանձնեմ Սիրտս, հոգիս եւ կեանքս:

100 օրուան ներող. Ամէն մէկ անգամին:

Յիսուս, Մարիամ, Յովսեփ, ինձ օգնեցէք վերջին ճգնաժամուս:

100 օրուան ներող. Ամէն մէկ անգամին:

Յիսուս, Մարիամ, Յովանի, խաղաղութեամբ ձեր ընկերութեան մէջ մեռնելու շնորհքը տուեք ինձ:

100 օրուան ներող. Ամէն մէկ անգամին:

Օրհնեացէ զմեզ Սրբուհի Կոյսն Մարիամ  
հանգերձ գթած զաւակաւն իւրով.  
Ամէն:

### Ա Կ Պ Ե Լ Ի Ք

ՀՀ	սորդ	սիսաւ	ուրիշ
12	7	ընթարկող	ենթարկող
12	17	դառնակակից	դառնակոկիծ
17	6	նաեւ մարդոց	նաեւ ըլլաւ մարդոց
21	3	զռնդէ	զռնտէ
21	17	սերէ	սիրէ

Դպ Եկեղեց Յիսուս Իսրայէլ  
Տիր Տիգեր և Կառուց  
աւայում Տիր Մար Տիգեր  
Երկու անուն ոյ պատրիք  
և ՀԱ յու ովորդութեան  
Խայր և ովայրութեան  
և բայց առաջնորդութեան ու առաջնորդութեան  
հաւաքած ու հաւաքած ու առաջնորդութեան  
ին Գիւրու և Հայութեան

1200

2013



1980  
0026  
0007

